«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Երևան – 2023

ՆԱԽԱԲԱՆ

«Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ–ի (այսուհետ Քոլեջ, ՄՈՒՀ, ՎԲՀՔ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվել է հաստատության կողմից ներկայացրած դիմումին համաձայն: Ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացը համակարգվում և իրականացվում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է «ՀՀ կառավարության 2011թ.-ի հունիսի 30-ի N978-Ն որոշմամբ հաստատված ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011թ. հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N959- Ն որոշմամբ: Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը, որը բաղկացած է 4 տեղացի փորձագետներից:

Հավատարմագրման գործընթացը ֆինանսավորվել է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի (այսուհետ՝ ԿԳՄՍ) նախարարության կողմից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը:

Առանձանահատուկ շեշտադրվել է հաստատության և գործատուների հետ համագործակցությունը և դրա ազդեցությունը կրթության բովանդակության վրա: Զեկույցը պարունակում է Քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ....4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....4

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ....10

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ....10

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ....10

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....13

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ....13

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ....14

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ....17

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ....22

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ....27

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ....32

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ....36

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ....38

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ....41

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ....43

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ....46

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ....50

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ....51

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ....51

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ....52

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ....54

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ....55

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ....56

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ....57

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Վարդենիսի բժշկա-հումանիտար պետական քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս փորձագիտական խումբը հաշվի է առել, որ Քոլեջը ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթաց անցնում է երկրորդ անգամ և նախորդին (2020թ.) ստացել է պայմանական հավատարմագրում՝ երկու տարի ժամկետով: Նախորդ հավատարմագրման արդյունքում քոլեջը ստացել է բարելավման խորհրդատվություններ, և վերջին տարիներին իր գործունեությունը կազմակերպել է դրանց իրականացման ուղղությամբ՝ գրանցելով առաջընթաց բոլոր ոլորտներում:

Փորձագիտական խումբը գնահատում իրականացնելիս հաշվի է առնել նաև տարածաշրջանի սոցիալ-տնտեսական վիճակը և սահմանամերձ լինելու հանգամանքը:

Համաձայն Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի վերանայված առաքելության՝ ՎԲՀՔ-ն միջին մասնագիտական կրթական ծրագրերով որակյալ մասնագետներ պատրաստող կրթական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է պատրաստել հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված որակյալ մասնագետներ, ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր, որտեղ ուսանողը հանդես է գալիս որպես կրթական գործընթացի սուբյեկտ: Հարկ է նշել, որ քոլեջում իրականացվող կրթական ծրագրերն ունեն դեմոգրաֆիկ և ռազմավարական նշանակություն սահմանամերձ Վարդենիս քաղաքի և հարակից գյուղերի համար:

Քոլեջը բժշկական և հումանիտար ոլորտի միջին մասնագիտական կրթական ծրագրեր է իրականացնում ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակի (ՈԱՇ) 5-րդ մակարդակում: ՎԲՀՔ-ն իրականացնում է միջին մասնագիտական 5 կրթական ծրագիր հետևյալ մասնագիտություններով՝ «Քույրական գործ», «Բուժական կոսմետոլոգիա», «Գրադարանային գործ», «Դեղագործություն» և «Սպասարկման կազմակերպում»:

ՄԿԾ-ներն իրականացվում են Պետական կրթական չափորոշիչների (ՊԿՉ) հիման վրա, իսկ 2023 թվականից քոլեջն անցել է մոդուլային ծրագրերով ուսուցման: Նախորդ հավատարմագրման փորձագիտական խմբի խորհրդատվության հիման վրա քոլեջը կատարել է ծրագրային փոփոխություններ՝ հաշվի առնելով ներքին և արտաքին շահակիցների առաջարկությունները: Հիմնական փոփոխություններն իրականացվել են հատուկ մասնագիտական դասընթացների շրջանակներում: Կրթական ծրագրերի իրականացման համար Քոլեջը կարողացել է ուսուցման գործընթացում ներգրավել պրակտիկ բժիշկների և գործատուների, որի արդյունքում ուսանողները հնարավորություն են ունենում ներկա գտնվել գործնական միջավայրում, իրականացնել պրակտիկ

[1] ՀԱՎԵԼԱԾ 1: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

աշխատանքներ և ձեռք բերել մասնագիտական կարողություններ: Չնայած նրան, որ քոլեջում ամրագրված չեն դասախոսական կազմին ներկայացվող պահանջներ, ըստ կրթական ծրագրերի նպատակների, այնուամենայնիվ փորձագիտական խմբի համար հստակ տեսանելի է քոլեջի վարած քաղաքականությունն այդ ուղղությամբ, վերջինս մշտապես առաջնահերթություն է տալիս դասախոսական կազմի գործնական կարողություններին և մասնագիտական գիտելիքներին: Արդյունքում, դասախոսական կազմի ⅓-ը պրակտիկ և նեղ ոլորտային մասնագետներ են:

Վերջին երկու տարիներին քոլեջը ջանքեր է գործադրել նաև շենքային պայմանների բարելավման ուղղությամբ, բացի այդ ՎԲՀՔ-ն իր մասնագիտական ռեսուրսային բազայի ոչ լիարժեք լինելը կարողացել է լրացնել բժշկական կենտրոնների օգնությամբ: Փորձագիտական խումբը լիահույս է, որ քոլեջը քայլ առ քայլ կկարողանա ձեռք բերել նաև համապատասխան մասնագիտական լաբորատորիաներ:

Ուսանողական միջավայրը բարելավելու համար ՄՈՒՀ-ը ձեռնամուխ է եղել ուսանողական սրճարանի բացմանը, որը որոշակիորեն մոտիվացրել է ուսանողներին իրենց ժամանցը կազմակերպելու համար:

Քոլեջը գրադարանային հագեցվածությունն ապահովելու համար ներդրել է էլեկտրոնային գրադարան, վերջինս նպաստում է ֆինանսական միջոցների խնայողությանը և ուսանողներին համապատասխան մասնագիտական գրականությամբ ապահովմանը: ՎԲՀՔ-ի ներքին փաստաթղթաշրջանառությունը ներկայումս առավելապես իրականացվում է թղթային տարբերակով, սակայն ժամանակի պահանջ է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության ներդնումը:

Կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով քոլեջը փորձել է կանոնակարգել ՄՈՒՀ-ում իրականացվող գործընթացները, մշակվել են կանոնակարգային շատ փաստաթղթեր, սակայն ոչ բոլորն են ամբողջապես հարմարեցվել հաստատության առանձնահատկություններին: Այս փուլում ՎԲՀՔ-ն կարիք ունի գնահատելու այդ կանոնակարգերի արդյունավետությունը և թողնելու նրանք, որոնք լիարժեք գործում են և անհրաժեշտ են: Քոլեջի զարգացումն ապահովելու նպատակով մեծ պատասխանատվությամբ իր գործունեությունն է ծավալում ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, վերջինս ընկած է քոլեջում իրականացվող բարեփոխումների իրականացման հիմքում: Վերջինիս հետ միասին քոլեջում անհրաժեշտություն է դառնում կոլեկտիվում ներգրավված մյուս աշխատակիցների հմտությունների նույնամակարդակ աստիճանի ապահովումը, որը կնպաստի ժամանակի և ռեսուրսների արդյունավետ ծախսմանը:

ՎԲՀՔ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմներ, վերջին երկու տարիներին նկատելի է ուսանողների թվաքանակի նկատելի աճ, որին նպաստել է քոլեջի ակտիվ համագործակցությունը դպրոցների հետ, ինչպես նաև շենքային պայմանների բարելավումը և ուսանողների տեղափոխման (գյուղերից դեպի քոլեջ և հակառակը) հարցերի կարգավորումը:

Հետազոտության ոլորտում քոլեջի համար կարևոր է գնահատել Վարդենիս քաղաքի և մոտակա գյուղերի եղած կարիքները և մարտահրավերները: Այս փուլում քոլեջի համար առաջնահերթ է հասկանալը, թե ինչ է հետազոտությունն իրենց համար և թե ինչպես դրանք կարող են ներդրվել կրթական ծրագրերում: Վերջինիս ներդրման համար անհրաժեշտ կլինի

նաև զարգացնելու դասախոսական կազմի հմտությունները: Քոլեջն այս ուղղությամբ դեռևս շատ աշխատանքներ ունի անելու:

Ինչ վերաբերում է հաշվետվողականությանը, ներկայումս քոլեջի ստորաբաժանումներն իրենց հաշվետվությունները ներկայացնում են ռազմավարական նպատակներին համապատասխան, որը թույլ կտա նրանց ընթացիկ գնահատելու իրենց ձեռքբերումները: Նախորդ հավատարմագրման արդյունքում քոլեջը ներդրել է նաև իր պաշտոնական կայքէջը, որը նպաստում է ՄՈՒՀ-ում իրականացվող գործընթացների թափանցիկության ապահովմանը:

Արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացները քոլեջի ռազմավարական առաջնահերթություններից են, և ՎԲՀՔ-ն քայլեր է ձեռնարկել նոր գործընկերների ձեռքբերման ուղղությամբ: Վերջին երկու տարիներին քոլեջը կազմակերպել է փոխադարձ այցեր, կնքել հուշագրեր և պայմանագրեր նմանատիպ կրթություն մատուցող այլ ուսումնական հաստատությունների հետ, ինչպես նաև ակտիվ համագործակցել տեղական քոլեջների, գործատուների, հիվանդանոցների, պոլիկլինիկայի, դպրոցների հետ:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը քայլեր է ձեռնարկել արտասահմանյան միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ կապ հաստատելու և համագործակցության եզրեր գտնելու համար, այնուամենայնիվ առավել խորքային գործընթացներ սկսելու համար քոլեջն անհրաժեշտություն ունի քայլ առ քայլ նախապատրաստելու ինչպես դասախոսական կազմին, այնպես էլ՝ ուսանողներին: Այդ խնդրի լուծման համար առաջնահերթ է օտար լեզուների իմացությունը:

Քոլեջը որակի ապահովման գործընթացներն իրականացնելու համար մշակել է համապատասխան փաստաթղթային հենք, սակայն փորձագիտական խումբը կարևորում է նաև ներքին և արտաքին շահակիցների ակտիվ մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում: ՊԻԳԲ շրջափուլը ամբողջովին փակված չէ քոլեջի հիմնական գործընթացներում, անհրաժեշտություն է նկատվում գնահատման գործիքների բազմազանեցման ուղղությամբ, որոնք կապահովեն օբյեկտիվ և վստահելի տեղեկատվություն որոշումների կայացման գործընթացում:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) Տարածաշրջանում ունեցած ռազմավարական կարևորագույն նշանակությունը:
2) Կրթական ծրագրերի մշակման և վերանայման գործընթացում գործատուների ներգրավումը:
3) Դասախոսական կազմում պրակտիկ մասնագետների ներգրավումը:
4) Ուսանողական միջավայրի առկայությունը:
5) Ռեսուրսների բարելավման ուղղությամբ քոլեջի վարած քաղաքականությունը:
6) Ռազմավարական նպատակերին համապատասխան հաշվետվողականության համակարգի ձևավորումը:
7) Ակտիվությունը նոր գործընկերներ ձեռք բերելու ուղղությամբ:
8) Ղեկավար կազմի ջանքերը որակի ապահովման համակարգի կայացման գործում:

Հաստատության թույլ կողմերն են.

1) ՌԾ նպատակների գնահատման ուղղությամբ հստակ և չափելի քանակական և որակական ցուցիչների սակավությունը:

2) Վարչական աշխատակազմի փոխանցելի կարողությունների պակասը։
3) Քոլեջի գործընթացները կարգավորող փաստաթղթային հենքի վերանայման անհրաժեշտությունը։
4) Ռազմավարական նպատակների համար ՊԻԳԲ ցիկլի դեռևս ոչ ամբողջական կիրառումը։
5) Առաջադրանքների բազայի անկատարությունը։
6) Ուսանողական համակազմի նախաձեռնողականության պակասը։
7) Դասախոսական կազմի աշխատանքի արդյունավետության գնահատման համակարգային մեխանիզմների բացակայությունը։
8) Ներքին և արտաքին շահակիցների պասիվ ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում։

Հիմնական խորհրդատվություններ.

Առաքելությունը և նպատակները

1) Դիտարկել քոլեջի անվանման, կրթական ծրագրերի ուղղվածության համապատասխանեցման հնարավորությունը։
2) Վերանայել քոլեջի գործող ռազմավարությունը՝ իրականացնելով ՌԾ նպատակների և խնդիրների համապատասխանեցում, ապահովելով շոշափելի և չափելի արդյունքներ ցույց տվող քանակական կամ որակական ցուցանիշներ։
3) Ռազմավարական պլանավորման գործընթացում հստակեցնել տրամադրվող ֆինանսական և նյութական ռեսուրսները։

Կառավարումն ու վարչարարությունը

4) Մշակել և ներդնել աշխատակիցների աշխատանքի արդյունավետության գնահատման ցուցանիշներ։
5) Քայլեր ձեռնարկել վարչական և ուսումնաօժանդակ կազմի մասնագիտական զարգացման ուղղությամբ։
6) Հստակ տարանջատել պարտականությունների և պատասխանատվության բաշխումը կառավարչական օղակներում (ոչ միայն փաստաթղթային հենքով, այլ գործառնական)։
7) Մշակել և իրականացնել ֆինանսական այլ աղբյուրների հայթայթման ուղիներ։
8) Իրականացնել ներդրված փաստաթղթերի մշտադիտարկում՝ պահպանելով կիրառական փաստաթղթերը կամ ոչ կիրառականները համապատասխանեցնել քոլեջի առանձնահատկություններին։

Մասնագիտության կրթական ծրագրերը

9) Ապահովել ոչ մասնագիտական առարկաների բովանդակության կապը կրթական ծրագրերի առանձնահատկություններին և բովանդակությանը։
10) Ստեղծել առաջադրանքների շտեմարան, որոնք կստուգեն տվյալ դասընթացի ուսումնառության արդյունքում ուսանողի մոտ ձևավորվող վերջնարդյունքները։
11) Բազմազանեցնել ինտերակտիվ դասավանդման մեթոդները՝ նպաստելով ուսանողների վերլուծական մտքի զարգամանը։

12) Վերանայել ամփոփիչ ատեստավորման քննության հարցաշարերը՝ ներառելով գործնական կարողությունները և հմտությունները ստուգող հարցեր:

Ուսանողները

13) Ներդնել ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ՝ ապահովելով ուսանողի աշխատանք փնտրելու, գտնելու և հարցազրույցի ներկայանալու կարողությունների զարգացումը:
14) Ուսումնասիրել աշխատող շրջանավարտների կարիերայի հետագիծը՝ հասկանալու համար շրջանավարտների հիմնական խնդիրները՝ ապահովելով նաև ՄԿԾ-ների ընթացիկ բարելավումը:
15) Մշակել հանձնարարականներ, որոնք կնպաստեն ուսանողի ստեղծագործական, վերլուծական, հետազոտական կարողությունների զարգացմանը:
16) Ակտիվացնել Ուսանողական խորհրդի աշխատանքները՝ նպաստելով բոլոր ուսանողների ակտիվ ընդգրկմանը կառույցի աշխատանքներին:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը

17) Իրականացնել ուսումնաօժանդակ և ՊԴ անձնակազմի աշխատանքի արդյունավետության համակարգային գնահատում:
18) Ապահովել դասախոսական և ՈւՕ կազմերի վերապատրաստումների (մասնագիտական, մեթոդական) մասնակցության հնարավորություն:

Հետազոտությունը և զարգացումը

19) Ուսումնասիրել և ներդնել միջին մասնագիտական կրթության մակարդակին համապատասխան հետազոտական աշխատանքների լավագույն փորձը:
20) Ներդնել հետազոտական գործունեության համար խրախուսման հստակ մեխանիզմներ ուսանողների և դասախոսական կազմի համար:

Ենթակառուցվածքը և ռեսուրսները

21) Համալրել էլեկտրոնային գրադարանի ֆոնդը ինչպես հայալեզու, այնպես էլ օտարալեզու մասնագիտական գրականությամբ:
22) Գտնել այլընտրանքային ֆինանսական ռեսուրսների ներգրավման մեխանիզմներ:
23) Դիտարկել մասնագիտական ռեսուրսների ձեռքբերման հնարավորություն միջազգային դրամաշնորհների միջոցով:

Հասարակական պատասխանատվությունը

24) Ապահովել քոլեջի պաշտոնական կայքէջի գործարկումը նաև օտար լեզուներով:
25) Ներդնել հասարակությանն արժեքներ փոխանցող մեխանիզմներ՝ նպաստելով քոլեջի վարկանիշի բարձրացմանը:

Արտաքին կապերը և միջազգայնացումը

26) Քննարկել և թիրախավորել այն շուկան (անգլալեզու, ռուսալեզու), որտեղ քոլեջն առավել հստակ է պատկերացնում համագործակցության շրջանակը կրթական

ծրագրերի իրականացման, դասախոսական և ուսանողական համակազմի փորձի փոխանակման տեսանկյունից։

27) Մշակել հստակ գործողությունների պլան, որտեղ ամրագրված կլինի, թե քոլեջը որ գործատու կազմակերպությունների, միջազգային գործընկերների հետ է փորձելու կապեր հաստատել և համագործակցության եզրեր գտնել։
28) Կազմակերպել օտար լեզվի (անգլերեն) պարապմունքներ թե դասախոսական և թե ուսանողական կազմերի համար՝ ընթացիկ իրականացնելով արդյունավետության գնահատումներ։
29) Դիտարկել մասնավոր միջին մասնագիտական հաստատությունների ասոցիացիա ձևավորելու հնարավորությունը՝ ապահովելով նոր գաղափարների գեներացում և իրականացում։

Որակի ներքին ապահովման համակարգը

30) Ընդլայնել որակի ներքին ապահովման համակարգում ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության շրջանակները։
31) Հստակեցնել Քոլեջի շահակիցների դերակատարությունը և պատասխանատվության շրջանակը որակի ապահովման գործընթացներում։
32) Բազմազանեցնել կարիքների վերհանման մեխանիզմները։
33) Գործարկել ՈԱ ՊԻԳԲ շրջափուլը քոլեջում իրականացվող բոլոր գործընթացների համար։

Հերմինե Գրիգորյան
Փորձագիտական խմբի ղեկավար

28-ը նոյեմբերի 2023թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է փորձագիտական խմբի հետևյալ անդամների կողմից՝

Հերմինե Գրիգորյան՝ Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարանի Բնական գիտությունների ֆակուլտետի դեկան, «Մաթեմատիկայի և ինֆորմատիկայի» ամբիոնի դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, փորձագիտական խմբի ղեկավար:

Գոհար Սարգսյան՝ Երևանի հենակետային բժշկական քոլեջ, վերակենդանացման, քաղաքացիական պաշտպանության, անվտանգության և առաջին բուժօգնության ամբիոնի դասախոս, մեթոդիստ, կրթության որակի ապահովման պատասխանատու, փորձագիտական խմբի անդամ:

Հայարփի Ջավրուշյան՝ Ավանդական բժշկության համալսարան, Բնագիտական առարկաների ամբիոնի վարիչ, ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի գիտաշխատող, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, փորձագիտական խմբի անդամ:

Մանվել Գևորգյան՝ Գավառի ակադեմիկոս Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ, ֆինանսներ բաժնի 3-րդ կուրսի ուսանող, փորձագիտական խմբի ուսանող անդամ:

Փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է ուսումնական հաստատության հետ:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի մասնագետ Անահիտ Տերտերյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները ստորագրել են գաղտնիության և անկախության հայտարարագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

Վարդենիսի բժշկա-հումանիտար պետական քոլեջն ինստիտուցիոնալ հավատարմագրում անցնելու համար 10.04.2022թ. ներկայացրել է սահմանված ձևաչափի դիմում-հայտ՝ լիցենզիայի և հրամանների կրկնօրինակներով:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունն ուսումնասիրել է դիմում-հայտում ներկայացված տվյալները և կից փաստաթղթերը: Դիմում-հայտի ընդունման մասին որոշման կայացումից հետո Քոլեջի և ՈԱԱԿ-ի միջև կնքվել է պայմանագիր (20 հուլիսի 2022թ.): Կազմվել և հաստատվել է հավատարմագրման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

Ինքնավերլուծությունն իրականացրել է քոլեջի կողմից ձևավորած աշխատանքային խումբը: Ժամանակացույցով նախատեսված ժամկետներում հաստատությունը, ըստ ՈԱԱԿ-ի կողմից սահմանած ձևաչափի, ներկայացրել է ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, ուղեկցող փաստաթղթերի փաթեթը: ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է զեկույցը՝ տեխնիկական և բովանդակային առումով ՈԱԱԿ-ի պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Քոլեջի ներկայացրած ինքնավերլուծությունը չի համապատասխանել սահմանված միասնական ձևաչափին, առկա են

եղել տեխնիկական, ձևաչափային և բովանդակային թերություններ։ Ինքնավերլուծությունը վերադարձվել է ՄՈՒՀ–ին, քոլեջը սահմանված ժամկետներում շտկել է թերությունները և ինքնավերլուծությունը համապատասխանեցրել ՈԱԱԿ սահմանված ձևաչափին։ Ինքնավերլուծությունը ՈԱԱԿ է ներկայացվել11.07.2023թ.:

Նախապատրաստական փուլ

Փորձագիտական խմբին աշխատանքներին նախապատրաստելու և գործընթացների արդյունավետությունն ապահովելու նպատակով ՈԱԱԿ-ի կողմից իրականացվել են չորս վերապատրաստումներ հետևյալ թեմաներով.

1. փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
2. հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան,
3. ՄԿՈՒ (Մասնագիտական կրթություն և ուսուցում) ոլորտի առանձահատկությունների սահմանում և հավատարմագրման չափանիշների մեկնաբանում միջին մասնագիտական ոլորտին համապատասխան,
4. Նախնական գնահատումը՝ որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները:

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով ՄՈՒՀ-ի ինքնավերլուծությունը և ուղեկցող փաստաթղթերի փաթեթը, իրականացրել է նախնական գնահատում ըստ ձևաչափի՝ պատրաստելով լրացուցիչ ուսումնասիրման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերի, ինչպես նաև խնդիրների և հարցերի ցանկը՝ նշելով նաև համապատասխան ստորաբաժանումները կամ թիրախային խմբերը: Այնուհետև փորձագիտական խումբն ամփոփել է նախնական գնահատման արդյունքները և կազմել փորձագիտական այցի պլան-ժամանակացույց[2]: Առաջնորդվելով Փորձաքննության իրականացման ձեռնարկով՝ ժամանակացույցում ներառվել են փորձագետների կողմից նախատեսվող հանդիպումները բոլոր խմբերի հետ, ինչպես նաև դասալսումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն[3] և այլն: Փորձագիտական խմբի անդամները նաև մասնագիտական հանդիպումներ են ունեցել քոլեջի կողմից ներկայացված կրթական ծրագրի պատասխանատուի, դասավանդող դասախոսների և ուսանողների հետ: Նախքան մասնագիտական հանդիպումները, փորձագետներն իրենց մասնագիտության շրջանակներում ուսումնասիրել են մոդուլների շրջանակներում ուսանողներին տրվող առաջադրանքները:

Նախանական այց

2023թ. օգոստոսի 31-ին առցանց հանդիպում է տեղի ունեցել քոլեջի ղեկավար կազմի հետ: Հանդիպումներին ներկա են գտնվել ՈԱԱԿ Ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի ղեկավարը, փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը: Հանդիպման ընթացքում քոլեջի ղեկավար կազմին են ներկայացվել և նրանց հետ համաձայնեցվել փորձագիտական այցի պլան-ժամանակցույցը, ինչպես նաև քննարկվել և փոխհամաձայնեցված որոշումներ են կայացվել փորձագիտական այցի տեխնիկական, կազմակերպչական, տեղեկատվական հարցերի, հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ:

---

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

Փորձագիտական այց

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2023թ. սեպտեմբերի 10-13-ն ընկած ժամանակահատվածում: Հարցերի պարզաբանման նպատակով կազմակերպվել են ֆոկուս խմբային հանդիպումներ դասախոսների, ուսանողների, շրջանավարտներու, գործատուների և այլ շահակիցների հետ, մասնակիցներն ընտրվել են նախօրոք տրամադրված ցանկից՝ ներկայացուցչականության սկզբունքով: Փորձագիտական այցի յուրաքանչյուր աշխատանքային օրվա վերջում տեղի ունեցած փորձագիտական խմբի փակ հանդիպման ժամանակ դուրս են բերվել փորձագիտական գնահատման միջանկյալ արդյունքները, իսկ այցի ավարտին փակ քննարկմամբ ամփոփվել են այցի հիմնական արդյունքները: Իրականացվել են ըստ ժամանակացույցի նախատեսված բոլոր հանդիպումները տարբեր շակահկիցների հետ, փորձագիտական խումբն իրականացրել է նաև դասալսումներ (պլանավորված և հավելյալ), քոլեջի ռեսուրսների[4] և գործատուների բազաների դիտարկումներ:

Չափանիշների վերաբերյալ վերջնական եզրակացության փորձագիտական խումբը հանգել է բոլոր անդամների քննարկումների և վերլուծությունների արդյունքում՝ մշտապես կիրառելով կոնսենսուսի սկզբունքը:

Փորձագիտական զեկույց

Փորձագիտական խմբի անդամները և ՈԱԱԿ համակարգողը պատրաստել են փորձագիտական զեկույցի նախնական տարբերակը, որը համաձայնեցվել է փորձագետների հետ: Նախնական զեկույցը տրամադրվել է քոլեջին՝ 02.11.2023թ.: Նախնական զեկույցի վերաբերյալ Քոլեջը դիտարկումներ չի ներկայացրել: Փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 28.11.2023թ.

_____

Անահիտ Տերտերյան

Փորձագիտական խմբի համկարգող

28-ը նոյեմբերի 2023թ.

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿՈՂՄԻՑ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Պատմություն**. «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը հիմնադրվել է 2012թ.: Քոլեջը հիմնադրել է Նիկողոս Գևորգի Գասպարյանը ՀՀ առողջապահության նախարարության աջակցությամբ: Քոլեջը տրամադրում է միջին մասնագիտական կրթություն:
2. **Կրթություն.** ՎԲՀՔ-ն իրականացնում 5 միջին մասնագիտական կրթական ծրագրեր՝ «Քույրական գործ», «Դեղագործություն», «Բուժական կասմետոլոգիա», «Սպասարկման կազմակերպում», «Գրադարանային գործ»:

   Քոլեջում կրթություն է ստանում 93 ուսանող: Դասախոսական կազմը բաղկացած է 29-ն աշխատակցից, կրթական գործընթացներում ներգրավված են ինչպես ոլորտի պրակտիկ մասնագետներ, այնպես էլ բազմամյա փորձ ունեցող մանկավարժներ: Իր գործունեության ընթացքում Քոլեջը պատրաստել է 300-ից ավել մասնագետներ, որոնք իրենց ուսումը շարունակել են հայաստանյան բուհերում կամ ծավալել են իրենց գործունեությունը որպես մասնագետներ տարածաշրջանի բուժհիմնարկներում:
3. **Հետազոտություն.** Քոլեջի ռազմավարական առանաջնահերթություններից է դիտարկվում նաև հետազոտության իրականացում: Հետազոտական որոշ աշխատանքներ ներառված են կրթական ծրագրերի շրջանակներում ուսանողներին տրամադրվող առաջադրանքներում:
4. **Արտաքին կապեր, Միջազգայնացում.** Արտաքին կապերի զարգացման նպատակով քոլեջը համագործակցում է տարածաշրջանի գործատուների և կազմակերպությունների հետ, համագործակցությունների արդյունքում քոլեջը ձեռք է բերում պրակտիկ դասախոսական կազմ, ինչպես նաև կարողանում կիրառել վերջիններիս ռեսուրսային բազաների հնարավորությունները: Քոլեջն ունի նաև համագործակցություններ այլ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ: Միջազգայնացման ուղղությամբ իրականացվող գործընթացները դեռևս մեկնարկային փուլում են:
5. **Որակի ապահովում.** Որակի ապահովման համակարգը քոլեջում ներդրվում է 2018թ.-ից: Այս ուղղությամբ ՄՈՒՀ-ը մշակել է համապատասխան փաստաթղթային հենք, իրականացվում են որոշ հարցումներ, սակայն որակի ապահովման ՊԻԳԲ շրջափուլը դեռևս ընկած չէ քոլեջում իրականացվող բոլոր գործընթացների հիմքում:

Աղբյուր. *վերոնշյալ տիրույթներում փաստերի դուրս բերման աղբյուր են հանդիսանում ՄՈՒՀ-ի կողմից տրամադրված փաստաթղթերը (օր՝ ինքնավերլուծություն, ռազմավարական ծրագիր, ժամանակացույց, ստորաբաժանումների պլաններ, հայեցակարգեր և այլն):*

I. ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: Մասնագիտական ուսումնական հաստատության (այսուհետ՝ ՄՈՒՀ) վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր: Նախորդ հավատարմագրման արդյունքում փորձագիտական խումբը ՎԲՀՔ-ին տրամադրել է խորհրդատվություն վերաձևակերպելու հաստատության առաքելությունը՝ ընդգրկելով քոլեջի հստակ դերակատարությունը տարածաշրջանում: Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի վերանայված առաքելությունը ներկայացված է 2022թ. հունվարի 16-ի տնօրինական խորհրդի կողմից հաստատված 2021-2026թթ. զարգացման ռազմավարական ծրագրում, ըստ որի՝ ՎԲՀՔ-ն միջին մասնագիտական կրթական ծրագրերով որակյալ մասնագետներ պատրաստող կրթական հաստատություն է, որի գործունեությունը նպատակաուղղված է պատրաստել հիմնարար և կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով օժտված որակյալ մասնագետներ, ձևավորում է ուսանողակենտրոն միջավայր, որտեղ ուսանողը հանդես է գալիս որպես կրթական գործընթացի սուբյեկտ:

Քոլեջը բժշկության ոլորտում իրականացնում է միջին մասնագիտական 3 կրթական ծրագիր՝ «Քույրական գործ», «Դեղագործություն», «Բուժական կոսմետոլոգիա», իսկ հումանիտար ոլորտում 1՝ «Գրադարանային գործ» ՄԿԾ-ն: 2023-2024 ուստարվանից ներդրվել է «Սպասարկման կազմակերպում» կրթական ծրագիրը: Անհրաժեշտ է նշել, որ վերջինս չի համարվում ոչ հումանիտար, ոչ էլ բժշկության ոլորտը ներկայացնող մասնագիտություն, ծրագիրը համապատասխանում է ծառայությունների մատուցման ոլորտին: ՎԲՀՔ-ն իրականացնում է ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին համապատասխան կրթություն: Անհրաժեշտ է ընգծել, որ քոլեջում իրականացվող բժշկական կրթական ծրագրերն ունեն ռազմավարական նշանակություն սահմանամերձ Վարդենիս քաղաքի և հարակից գյուղերի համար:

ՎԲՀՔ ՌԾ-ն ներառում է նաև քոլեջի տեսլականը և յոթ հիմնական ռազմավարական նպատակները, դրանց իրագործման ուղիները: ՎԲՀՔ-ի ռազմավարական նպատակներն են՝ կառավարումը և վարչարարությունը, կրթական գործունեությունը, ենթակառուցվածքները և ֆինանսական ռեսուրսները, ուսանողակենտրոն քաղաքականությունը, արտաքին կապերը և միջազգայնացումը, արդիական հետազոտությունները և նորարարությունը, որակի ապահովման ներքին համակարգը: Յուրաքանչյուր նպատակի իրականացման համար սահմանված են առաջընթացի գնահատման ցուցիչներ: Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ցուցիչները մեծամասամբ մշակված կամ վերանայված փաստաթղթերի առկայությունն է, սակավ են քանակական կամ որակական փոփոխություն ենթադրող արդյունքները:

Նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա ՎԲՀՔ-ն մշակվել է 2021-2026թթ. ռազմավարական զարգացման ծրագրի գործողությունների իրականացման պլան-ժամանակացույց, որում ներառված են ՌԾ-ի հիմնախնդիրների իրականացման համար քայլերը, իրականացման ժամանակացույցը, պատասխանատուները, անհրաժեշտ ռեսուրսները և ակնկալվող արդյունքները: Անհրաժեշտ ռեսուրսներ սյունակում առանձնացված են միայն մարդկային ռեսուրսները, ֆինանսական և նյութական

ռեսուրսներին հղում արված չէ, իսկ պատասխանատվությունների ամենամեծ շրջանակը բաժին է ընկնում ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին:

Անհրաժեշտ է նշել, որ որոշ ռազմավարական նպատակներ բաժանված են երկու ենթախմբերի, որոնց միջև կապը տեսանելի չի դարձնում ռազմավարական նպատակի իրականացումը, օրինակ՝ Ուսանողակենտրոն քաղաքականություն ռազմավարական նպատակի առաջին ենթախմբում ներկայացված է ուսանողների հավաքագրումը, ուսանողների կրթական կարիքների վերհանումը, կարիերայի կենտրոնի աշխատանքը և այլն, իսկ երկրորդ ենթախմբում ներկայացված է դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի հավաքագրումը, դասախոսական կազմի վերապատրաստումները և այլն: Տեսանելի չէ այս բոլոր գործողությունների կապը ուսանողակենտրոն քաղաքականության հետ: Նույն մոտեցումն է ներկայացված նաև արդիական հետազոտություններ և նորարարություն նպատակի համար, որտեղ որպես երկրորդ ենթախմբի խնդիրներ ներկայացված է հասարակական պատասխանատվությունը կապված հաշվետվությունների վերլուծական մոտեցման, հասարակության հետ հետադարձ կապի գործող մեխանիզմների և այլնի հետ, հասարակական պատասխանատվությունն իրենից չի ենթադրում հետազոտությունների հրապարակում և իմաստային կապ չունի հետազոտության իրականացման հետ:

Քոլեջն իր ինքնավերլուծությունում սահմանում է ներքին և արտաքին շահակիցներին, ըստ որի ներքին շահակիցներն են՝ վարչական անձնակազմը, ուսանողները, դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը: Արտաքին շահակիցներն են՝ շրջանավարտները, ուսանողների ծնողները, գործատուները, պետական և մասնավոր կառույցները: Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման նպատակով քոլեջն իրականացնում է հարցումներ, քննարկումներ ուսանողների, գործատուների, դասախոսների շրջանում: Բանավոր մակարդակով իրականացվող քննարկումները հիմնականում չեն արձանագրվում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ շահակիցների որոշ կարիքներ դարձել են ռազմավարական պլանավորման մաս, օրինակ՝ ՄԿԾ-ների վերանայումը, ռեսուրսային բազայի վերազինումը և այլն:

Նախորդ հավատարմագրման արդյունքում քոլեջին տրամադրվել է խորհրդատվություն մշակել և կիրառել ՌԾ հաշվետվության ձևաչափ, ստեղծել ՌԾ գնահատման համար մոնիթորինգային խումբ: Արդյունքում ՎԲՀՔ-ն մշակել է ստորաբաժանումների հաշվետվության ձևաչափ՝ ըստ ռազմավարական նպատակների, 2022թ. հաշվետվությունները ներկայացվում են այդ ձևաչափով:

Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջը պլանավորում է մոտակա ժամանակահատվածում գնահատել և վերանայել ներկայիս ռազմավարական ծրագիրը, քանի որ ծրագրում առկա խնդիրների մեծ մասն արդեն իրագործվել է: 2022թ. ՎԲՀՔ-ն հաստատել է ՌԾ իրականացման արդյունքների գնահատման քաղաքականությունը, ըստ որի գնահատումն իրականացվելու է հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի կողմից, սակայն անհրաժեշտ է նշել, որ քաղաքականության մեջ ամրագրված չէ, թե ինչ ժամանակահատվածում է ՌԾ-ն գնահատվելու և ինչ մեխանիզմներով:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրման արդյունքում ՎԲՀՔ-ն հստակեցրել է իր առաքելությունը, որն ապահովում է սահմանամերձ շրջանի համար միջին մասնագիտական կադրերի

պատրաստումը: Ընդգծելով Վարդենիս քաղաքի և հարակից տարածքների դեմոգրաֆիական առանձնահատկությունները՝ փորձագիտական խումբը կարևորում է բժշկական ոլորտի միջին մասնագիտական կրթական ծրագրերի առկայությունը՝ որպես տարածաշրջանի բնակիչների բժշկական սպասարկման կարևոր գործոն:

Փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջի անվան՝ բժշկա-հումանիտար լինելու փաստը, կարող է ոլորտային հակասություններ ստեղծել քոլեջի անվան և նոր ներդրված ՄԿԾ-ի՝ Սպասարկման կազմակերպում, միջև:

Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջի առաքելությունն արտահայտում է տարածաշրջանի ներքին և արտաքին շահակիցների կարիքները, վերջիններս բարձր են գնահատում քոլեջի առկայությունը Վարդենիս համայնքում՝ որպես ռամավարական նշանակություն ունեցող կառույցի (նամանավանդ բժշկական մասնագիտությունների առումով): Այս ամենը նպաստում է պրակտիկ ոլորտի դասախոսական կազմի ներգրավվմանը և քոլեջի հեղինակության պահպանմանը:

Ռազմավարական որոշ նպատակներ և խնդիրներ հստակեցնելու և փոխկապակցելու կարիք ունեն, և հաշվի առնելով քոլեջի պլանավորումները ՌԾ գնահատման և վերանայման ուղղությամբ, փորձագիտական խումբը քոլեջի ուշադրությունն է հրավիրում այս ուղղությամբ: Բացի այդ, որպես առաջընթացի ցուցիչներ փաստաթղթերի մշակմանն առաջնահերթություն տալը կարող է հանգեցնել նրան, որ մշակվեն չափից շատ փաստաթղթեր, որոնք իրենց կիրառությունը այդպես էլ չգտնեն, քանի որ դրանք հարմարեցված չեն լինի ներքին շահակիցների կարիքներին և քոլեջում իրականացվող իրական գործընթացներին: Առավել արդյունավետ կլինի, որ որպես առաջընթացի ցուցիչներ դիտարկվեն շոշափելի արդյունքներ ցույց տվող ցուցանիշները, օրինակ՝ ուսանողների քանակի ավելացումը, ուսանողներին հանձնարարվող առաջադրանքների բազայի ձևավորումը, շրջանավարտների աշխատանք գտնելը, գործատուների բավարարվածությունը և այլն: Խումբը նշում է, որ առավել կարևոր է ցուցիչների ծանրակշիռ լինելը, քան՝ քանակով շատ լինելը:

Դրական է, որ նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների հիման վրա հաստատությունը մշակել է ռազմավարական ծրագրի իրականացման պլան-ժամանակացույց, իսկ ֆինանսական և նյութական միջոցների հստակեցումը կնպաստի հետագայում ֆինանսների ճիշտ պլանավորմանը:

Հատկանշական է, որ 2022թ.-ից քոլեջի տարեկան և ստորաբաժանումների հաշվետվություններն իրականացվում են ՌԾ նպատակներին համապատասխան, որը նպաստում է ՌԾ նպատակների իրականացման գնահատմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրման արդյունքում քոլեջը վերանայել և հստակեցրել է իր առաքելությունը, մշակել է ռազմավարական նոր ծրագիր, որի նպատակները նպաստում են արտաքին և ներքին շահակիցների կարիքների բավարարմանը, ներդրված է ՌԾ-ից բխող հաշվետվողականության համակարգ, ՄԿԾ-ները համապատասխանում են ՈԱՇ-ի 5-րդ մակարդակին, փորձագիտական խումբը գտնում է, որ ՎԲՀՔ-ն բավարարում է չափանիշ 1-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎԲՀՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 1-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործառումն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր: ՎԲՀՔ-ում գործող կառավարման մարմիններն են ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը (տնօրենական խորհուրդը), գործադիր տնօրենը: Կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որը բաղկացած է 7 անդամներից: Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կազմում ընդգրկված են քոլեջի հիմնադիրը, որը նաև ժողովի նախագահն է, մեկ ուսանող ուսանողական խորհրդի առաջադրմամբ, մեկ դասախոս մանկավարժական խորհրդի առաջադրմամբ, մեկ արտաքին շահակից, տնօրենի տեղակալը, հաշվապահը և քարտուղարը: Ժողովի լիազորությունները սահմանվում են հինգ տարով, և նրա իրավասությանն են պատկանում քոլեջի գծային կառուցվածքի, հաստիքացուցակի, ռազմավարական ծրագրի, քոլեջի բյուջեի և նրա փոփոխությունների, տարեկան հաշվետվությունների, քոլեջի գործունեությունը կարգավորող այլ փաստաթղթերի հաստատումը: Ժողովը գործում է իր կանոնակարգին համապատասխան, որը հաստատվել է 2022թ.-ին: Քոլեջի ֆինանսական կառավարումը տեղի է ունենում տնօրենի, իսկ կրթական և այլ գործընթացների ընթացիկ կառավարումն իրականացվում է ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից: Վերջինս ներգրավված է կառավարման գործընթացներում 2020թ.-ից, նրա ջանքերով քոլեջում տեղի են ունեցել մի շարք բարեփոխումներ՝ ռեսուրսային բազայի բարելավում, դասախոսական կազմի երիտասարդացում, նոր գործընկերների ձեռքբերում, կառավարման համակարգի զարգացում և այլն:

Քոլեջում գործում է մանկավարժական խորհուրդը, որի գործառույթների շրջանակը ձևավորվում է կանոնակարգի համաձայն (հաստատված 2022թ.): Քոլեջում իր գործունեությունն է ծավալում նաև Ուսանողական խորհուրդը՝ որպես ինքնակառավարվող մարմին: Կառույցն իր աշխատանքները կազմակերպում է ՈՒԽ կանոնադրությանը համապատասխան: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խորհուրդը հիմնականում բարձրացնում է կազմակերպչական բնույթի հարցեր՝ ավարտական համազգեստ ունենալու, էքսկուրսիաներ կազմակերպելու և այլնի վերաբերյալ, իսկ կրթության վերաբերյալ հարցերը դեռևս քննարկման առարկա չեն դարձել:

Ըստ նախորդ հավատարմագրման խորհրդատվությունների՝ ՎԲՀՔ-ն վերանայել է իր կազմակերպական կառուցվածքը: Վերանայման արդյունքում միավորվել են կադրերի և ընդհանուր բաժինների գործառույթները, բաժինները դարձել են պատասխանատուներ, օրինակ՝ պրակտիկայի և կարիերայի պատասխանատու, հստակեցվել են ուղղահայաց և

հորիզոնական կապերը: Անհրաժեշտ է փաստել, որ որոշ աշխատակիցներ զբաղեցնում են մի քանի պաշտոններ և կատարում բազմաթիվ գործառույթներ, օրինակ՝ ամբիոնի վարիչը միևնույն ժամանակ զբաղեցնում է լաբորանտի, դասախոսի, գանձապահի հաստիքները և իրականացնում է գրադարանավարի գործառույթները:

Վերջին մեկ տարվա ընթացքում քոլեջի կողմից մշակվել են մի շարք քաղաքականություններ, կանոնակարգեր և ընթացակարգեր, օրինակ՝ էթիկայի կանոնակարգը, մարդկային ռեսուրսների կառավարման քաղաքականությունը, քոլեջի ներքին կարգապահական կանոնները, պաշտոնների անձնագրերը և այլն: Պաշտոնների անձնագրերում աշխատակիցների գործառույթները տարանջատված են, փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ բոլոր աշխատակիցների գործառույթների իրականացման գործում իր դերակատարումն ունի ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը: Վերջինիս միջամտությունը պայմանավորված է նրանով, որ աշխատակիցների մի մասն ունեն փոխանցելի հմտությունների զարգացման կարիք, օրինակ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման:

Փորձագիտական ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ քոլեջն իր կրթական գործընթացները կազմակերպելու համար հիմնականում ունի մարդկային ու բավարար նյութական ռեսուրսներ: Նյութական ռեսուրսների առումով քոլեջն օգտագործում է նաև Վարդանիսի բժշկական կենտրոնի և մյուս գործատուների նյութական հնարավորությունները:

Քոլեջի ֆինանսական մուտքերը սահմանափակ են և պայմանավորված են ուսանողների վարձավճարներով, իսկ որպես այլընտրանքային ֆինանսական հոսքեր դիտարկվում են բարեգործական նվիրատվությունները: Քոլեջի 2023թ. բյուջեի եկամուտները (13.185.000 դրամ) 2020թ.-ի բյուջեի (7.400.000 դրամ) համեմատ աճել է մոտ 80%-ով՝ պայմանավորված ուսանողների թվաքանակի ավելացմամբ: ՎԲՀՔ-ի եկամուտների մոտ 80%-ը ձևավորվում է ուսանողների վարձավճարներից, իսկ մնացյալը՝ բարեգործական ներդրումներից: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը՝ ի դեմս տնօրենի տեղակալի, փորձել է նաև կապ հաստատել տարբեր բարեգործական կառույցների հետ, որոնք իրականացնում են ներդրումներ պետական միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում, սակայն հաջողության հասնել չի կարողացել:

Ըստ քոլեջի կառավարման կանոնակարգերի՝ ներքին և արտաքին շահակիցներն ընդգրկված են կառավարման գործընթացներում: Դասախոսական կազմը ներգրավված է մանկավարժական խորհրդում, Հիմնադիրների ընդհանուր ժողովում, ուսանողական համակազմը հնարավորություն ունի մասնակցելու կառավարման գործընթացների Ուսանողական խորհրդի և Հիմնադիրների ժողովի միջոցով: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ թե՛ դասախոսական, թե՛ ուսանողական համակարգմերն ունեն թույլ մոտիվացիա կառավարման գործընթացներին ներգրավվելու գործում, խնդիրներն առավելապես բարձրաձայնվում և լուծում են ստանում տնօրենի տեղակալի կողմից: Թե՛ ներքին, թե՛ արտաքին շահակիցներն ունեն մեծ վստահություն վերջինիս նկատմամբ:

ՎԲՀՔ-ն մշակել և ընդունել է երկարաժամկետ 2021-2026 թթ. համար ռազմավարական ծրագիր, որում սահմանված են ռազմավարական նպատակները, խնդիրները և առաջընթացի գնահատման ցուցիչները: Անհրաժեշտ է փաստել, որ ցուցիչների լայն շրջանակն իրենից ենթադրում է փաստաթղթերի մշակում և վերամշակում: Ռազմավարական առաջնահերթությունների իրականացման նպատակով ՄՈՒՀ-ի կողմից կազմվել է պլան-

ժամանակացույց, վերջինիս համապատասխան քոլեջի բոլոր ստորաբաժանումները նույն թվականների համար կազմել են իրենց երկարաժամկետ պլանավորումները՝ ըստ հաստատված ձևաչափի: Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ստորաբաժանումների 2022-2026 թթ. աշխատանքային պլաններում որպես ակնկալվող արդյունքներ հիմնականում նշվում են արձանագրությունները, գրեթե առկա չեն արդյունավետության քանակական և որակական ցուցիչներ: ՄՈՒՀ-ում կարճաժամկետ պլանավորումներ որպես այդպիսին չեն իրականացվում:

Ուսումնական տարվա ավարտին ստորաբաժանումները ներկայացնում են կատարողականի իրենց հաշվետվություններն իրենց երկարաժամկետ պլանների հիման վրա: Ներկայացված հաշվետվությունների հիման վրա կազմվում է տնօրենի տարեկան հաշվետվությունը:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական խումբը խորհրդատվություն է տրամադրել քոլեջին՝ իրականացնելու ներքին և արտաքին գործոնների համակարգված, միասնական վերլուծություն: ՎԲՀՔ-ն 2022թ. մշակել է քոլեջի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ուսումասիրության մեթոդներ և գործիքներ ուղեցույցը: Ըստ այդ փաստաթղթի՝ որպես ներքին միջավայրի գործոնների ուսումնասիրության և վերլուծության մեթոդներ ընտրվել են ինքնավերլուծությունը, ինքնագնահատումը, մշտադիտարկումը (որպես գործիք ծառայում են հարցումները) և SWOT վերլուծությունը, իսկ արտաքին միջավայրի համար՝ SWOT վերլուծությունը և բենչմարքինգը: Անհրաժեշտ է նշել, որ ուղեցույցը լիարժեքորեն քոլեջի կողմից դեռևս չի կիրառվում: 2021թ. ՎԲՀՔ-ն իրականացրել է քոլեջի վրա ազդող գործոնների ազդեցության վերլուծություն: Վերլուծության մեջ արտաքին գործոններից շեշտադրված է տարածաշրջանում արտագաղթի ոչ ցանկալի ցուցանիշները, COVID 19 համավարակի ազդեցությունը, պետական և մասնավոր միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների միջև ոչ հավասար մրցակցային պայմանները և այլն: Վերջիններիս հաղթահարման ուղղությամբ քոլեջը վերանայել է դիմորդների ներգրավման քաղաքականությունը և գրացնել է ուսանողների քանակի աճ, պետական նմուշի դիպլոմ ուսանողներին տրամադրելու նպատակով դիմել է նաև պետական հավատարմագրման: Անհրաժեշտ է նշել, որ իրականացված վերլուծությունը չունի հստակ մեթոդաբանություն, պարզ չէ, թե այդ գործոնների բացահայտման համար ինչպիսի գործիքներ են կիրառվել:

Փորձագիտական այցից պարզվեց, որ քոլեջի հիմնական փաստաթղթերի մեծ մասի մշակումը կատարվել է 2022 թվականին, սակայն այդ փաստաթղթերի մի մասը չունի գործառնական նշանակություն, մասնավորապես ՄՌԿ քաղաքականությունը, քոլեջի ֆինանսների տնօրինման քաղաքականությունը և այլն: 2022 թվականի ՎԲՀՔ-ի գործունեության SWOT վերլուծության զեկույցի մեջ ռազմավարական առաջին նպատակի (1 .2 կառավարման համակարգի) համար որպես թույլ կողմեր նշվում են կառավարման համակարգում ՈԱ սկզբունքների ոչ լիարժեք կիրառումը, ենթակառուցվածքների միջև թույլ արտահայտված հետադարձ կապը, համագործակցության բացակայությունը, քոլեջում գործող ոչ արդյունավետ կարգերի, կանոնակարգերի, ընթացակարգերի առկայությունը: Փորձագիտական այցից նույնպես պարզ դարձավ, որ ստորաբաժանումների միջև կապը թույլ է արտահայտված, օրինակ՝ կարիերայի կենտրոնի կողմից հավաքագրած տվյալներին լիարժեք չեն տիրապետում ամբիոնի վարիչները, կրթական ծրագրերի

պատասխանատուները: Թույլ է հաղորդակցումը նաև ամբիոնների միջև, ներսում եղած լավ փորձը լիարժեք չի բացահայտվում և տարածվում:

Ինչ վերաբերում է ՊԻԳԲ շրջափուլի ներդրմանը, ապա անհրաժեշտ է նշել, որ հաստատությունում իրականացվող գործընթացների մի մասը պլանավորման, մյուս մասը իրականացման փուլում են: Հիմնականում բացակայում են խնդիր վերհանող որակի ապահովման մեխանիզմները (գնահատման փուլ), քոլեջում իրականացվող բարելավումները մեծամասամբ կապված են տնօրենի տեղակալի նախաձեռնողականությամբ: ՊԻԳԲ շրջափուլի ոչ լիարժեք կիրառումը նկատելի է ինչպես վարչարարության, այնպել ես մյուս ոլորտներում:

ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և գնահատման հիմնական մեխանիզմներն են շրջանավարտների զբաղվածության վերաբերյալ տվյալները, գործատու-դասախոսների հետ բանավոր քննարկումները, ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի հաշվետվությունները:

ՄԿԾ-ների հիմնական բովանդակությունը, ուսումնական պլանները, դասախոսական կազմը, գնահատման համակարգը քոլեջը չի հրապարակում: ՎԲՀՔ-ի պաշտոնական կայքէջում հրապարակվում են տվյալներ միայն ՄԿԾ-ների ուսուցման տևողության, որակավորման, հետագա կրթության վերաբերյալ: Կայքէջում ներկայացված չեն շրջանավարտների և նրանց հաջողությունների վերաբերյալ տեղեկատվություն:

Կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին թարմացված, օբյեկտիվ և անկողմնակալ քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող մեխանիզմների արդյունավետությունը պարզելու համար ՎԲՀՔ-ն պլանավորում է կատարել 2023-2024 ուսումնական տարում:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում քոլեջի կառուցվածքային պարզեցումը, ստորաբաժանումների համար աշխատանքային ընթացակարգերի մշակումը և ներդրումը, պաշտոնի անձնագրերի մշակումը, որն առավել կանոնակարգված է դարձրել կառավարման գործընթացները: Փորձագիտական խումբը նշում է, որ անհրաժեշտություն կա գնահատելու մշակված բազմաթիվ կանոնակարգերի և ընթացակարգերի գործառնական արդյունավետությունը, միայն այդ ձևով է հնարավոր ստեղծված բազմաթիվ փաստաթղթերից պահպանել անհրաժեշտները և կիրառականները:

Փորձագիտական խումբը գովելի է համարում ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի մոտիվացված աշխատանքը, որը քոլեջում հանգեցրել է մի շարք դրական տեղաշարժերի: Միևնույն ժամանակ, կառավարման արդյունավետության տեսանկյունից փորձագիտական խումբը նշում է, որ տնօրենի տեղակալի գերծանրաբեռնվածությունը կարող է հանգեցնել մի շարք առաջնահերթ աշխատանքների երկրորդական պլան մղվելուն: Անհրաժեշտ է ձևավորել թիմ, որը քոլեջի զարգացումն ապահովելու նպատակով տնօրենի տեղակալի հետ միասին կկիսի պարտականությունների և պատասխանատվության շրջանակը: Այս տեսանկյունից կարևորվում է նաև աշխատակիցների թե՛ մասնագիտական, թե՛ փոխանցելի հմտությունների (soft skills) զարգացումը, որը կնպաստի ժամանակի արդյունավետ ծախսմանը և իրականացվող աշխատանքների արդյունավետության ցուցանիշների բարելավմանը:

Չնայած նրան, որ վերջին տարիներին քոլեջն ունեցել է եկամուտների աճ, դեռևս շարունակում է առաջնային խնդիր մնալ ֆինանսական ռեսուրսների համալրումը, ՄՈՒՀ-ը

կարիք ունի շարունակելու գտնել եկամտի այլ աղբյուրներ՝ դրամաշնորհների և այլ ներդրումների տեսքով: Ֆինանսական կայունության համար եկամտի այլ աղբյուրների առկայությունը կնպաստի քոլեջի զարգացման ֆոնդի կայացմանը:

Դրական է, որ քոլեջը ձևավորել է միջավայր, որտեղ թե՛ ուսանողները, և թե՛ դասախոսները կարող են մասնակցել իրենց վերաբերող որոշումների կայացմանը, այնուամենայնիվ այդ հարթակը լիարժեքորեն չի օգտագործվում, քանի որ վերջիններիս մոտ նկատվում է մոտիվացիայի պակաս: Փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը ընդհանուր ժողովի շրջանակներում կարող է ձևավորել աշխատանքային խմբեր, որտեղ ուսանողները և դասախոսները հնարավություն կունենան մասնակցել կարևոր խնդիրների լուծմանը, օրինակ՝ կրթական ծրագրերի մշակման աշխատանքային խումբ, ուսանողների հարցերի հանձնաժողով, որակի ապահովման հանձնաժողով, վերջիններս կիրականացնեն ուսումնասիրություններ և կապահովեն տվյալներ որոշումների կայացման համար, այն նաև խթան կհանդիսանա քոլեջի մյուս դասախոսական և ուսանողական համակազմերի համար իրենց գործունեությունն ակտիվացնելու համար:

Դրական է, որ Քոլեջը փորձել է իրականացնել արտաքին գործոնների որոշակի ուսումնասիրություններ՝ պայմանավորված արտաքին աշխարհից եկած տեսանելի ազդակներով, այնուամենայնիվ դրանց հիմքում կանոնակարգված տվյալները բացակայում են: Վերջինս կարող է նպաստել նրան, որ մի շարք առավել խորքային ուսումնասիրություններ պահանջող գործոններ մնան չբացահայտված: Տվյալների հավաքագրման գործընթացներն անհրաժեշտ է դարձնել առավել համակարգված մեթոդական հիմքով:

Հաշվի առնելով, որ քոլեջը մասնավոր է, միևնույն ժամանակ ունի ուսանողների ոչ մեծ քանակ, փորձագիտական խմբի համար ընդունելի է, որ մի քանի հաստիքներ և մի շարք գործառույթներ կարող են դրված լինել մեկ աշխատակցի վրա, այնուամենայնիվ զբաղեցրած պաշտոնների արդյունավետության համար չափելի արդյունքներ չսահմանելը կարող է հանգեցնել իրականացվող աշխատանքների արդյունավետության նվազմանը: Չափելի արդյունքների ներդրումը կնպաստի ստորաբաժանումների աշխատանքի արդյունավետության գնահատմանը:

ՄԿԾ-ների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, շրջանավարտների հաջողությունների վերաբերյա տեղեկատվության հավաքագրումը և հրապարակումը կնպաստի քոլեջի վարկանիշի բարձրացմանը և թափանցիկության ապահովմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջի ներքին շահակիցներն ունեն ցածր մոտիվացիա մասնակցելու կառավարման գործընթացներին, քոլեջում իրականացվող գործընթացների հիմնական պատասխանատուն տնօրենի տեղակալն է, որը հանգեցրել է վերջինիս գերծանրաբեռնվածությանը, քոլեջում իրականացվող գործընթացները դեռևս ամբողջությամբ համակարգված չեն, առկա չէ աշխատակիցների աշխատանքի արդյունավետության գնահատման ցուցանիշներ, բացակայում են կարճաժամկետ պլանները, որոշումները չեն կայացվում հիմնավորված և վերլուծված տվյալների վրա, լիարժեք չի կիրառվում ՊԻԳԲ շրջափուլը, ընդհանուր առմամբ բացակայում են մասնագիտական կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության հավաքագրումը, վերլուծումը և հաջորդաբար կիրառումը գնահատող մեխանիզմները,

փորձագիտական խումբը գտնում է, որ ՎԲՀՔ -ն չի բավարարում չափանիշ 2-ի պահանջներին:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 2-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

III. ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր: ՎԲՀՔ-ն իրականացնում է միջին մասնագիտական հինգ կրթական ծրագիր հետևյալ մասնագիտություններով՝ «Քույրական գործ», «Բուժական կոսմետոլոգիա», «Գրադարանային գործ», «Դեղագործություն», «Սպասարկման կազմակերպում»: Քոլեջը ձեռք է բերել նաև լիցենզիա «Զբոսաշրջություն» կրթական ծրագիրն իրականցնելու համար, որով դեռևս ընդունելություն չի իրականացվել: ՄՈՒՀ-ում կրթություն է ստանում 93 ուսանող:

ՄԿԾ-ներն իրականացվում են պետական կրթական չափորոշիչների (ՊԿՉ) հիման վրա: Նախորդ հավատարմագրման փորձագիտական խումբը քոլեջին տրամադրել էր խորհրդատվություն ներքին և արտաքին շահակիցներին ՄԿԾ-ների կազմման և վերանայման գործընթացներին ներգրավելու ուղղությամբ: 2023 թվականից քոլեջն անցել է մոդուլային ծրագրերով ուսուցման: Փորձագիտական այցից և փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ՊԿՉ-ները տեղայնացնելիս քոլեջն իրականացրել է որոշակի փոփոխություններ, նամանավանդ «Դեղագործություն» ՄԿԾ-ում: Հիմնական փոփոխություններն իրականացվել են հատուկ մասնագիտական դասընթացների շրջանակներում, մասնավորապես, «Դեղերի դեղատնային տեխնոլոգիա» մոդուլային ծրագիրը 5-րդ կիսամյակից տեղափոխվել է 4-րդ կիսամյակ, իսկ «Դեղագործական քիմիա» մոդուլային ծրագիրը 4-րդ կիսամյակից տեղափոխվել է 5-րդ կիսամյակ: Փոփոխությունը պայմանավորված է նրանով, որ «Դեղերի դեղատնային տեխնոլոգիա» դասընթացի ժամանակ ուսանողներն ուսումնասիրում են դեղաձևերը, որը հիմք է հանդիսանում «Դեղագործական քիմիա» մոդուլի ուսումնասիրման համար: «Դեղերի դեղատնային տեխնոլոգիա» և «Դեղերի գործարանային տեխնոլոգիա» մոդուլները մի կիսամյակի փոխարեն բաշխվել են երկու կիսամյակների միջև (ընդհանուր ժամաքանակը 90 ժամ, որը բաժանվել է 2 x 45): «Ֆարմակոգնոզիա» մոդուլը, որը նախատեսված է եղել միայն երրորդ կուրսում, փոփոխություններից հետո այլևս դասավանդվելու է երեք կիսամյակների ընթացքում /2-րդ, 3-րդ, 4-րդ կիսամյակներում/: Անհրաժեշտ է նշել, որ ՄԿԾ-ները վերանայելիս գործընթացում ներգրավված են եղել քոլեջի պրակտիկ ոլորտի դասախոսները, որոնք միևնույն ժամանակ ոլորտի գործատուներն են:

«Բուժական կոսմետոլոգիա» և «Քույրական գործ» ՄԿԾ-ում էական փոփոխություններ տեղի չեն ունեցել: Այս ծրագրերում ավելացել է միայն մեկ կամընտրական առարկա՝ «Կլինիկական հոգեբանություն», իսկ «Դեղագործություն» ՄԿԾ-ում, որպես կամընտրական առարկա, ավելացել է Ֆարմակոթերապիա մոդուլը: Վերջիններիս ընտրությունը պայմանավորված է եղել դասախոսական կազմի առաջարկությամբ: Ուսումնական պլաններում տեղ գտած պահուստային ժամերը չեն օգտագործվում: Դեղագործություն ՄԿԾ-ում, որպես նախասիրական առարկաններ ավելացվել են «Ընտանեկան կյանքի նախապատրաստում», «Տարիքային հոգեբանություն», «Համակարգչային օպերատորական գործի հիմունքներ» դասընթացները: «Բուժական կոսմետոլագիա» ՄԿԾ-ում, որպես նախասիրական առարակներ, ներդրվել են՝ «Բարոյագիտության և գեղագիտության հիմունքեր», «Ընտանեկան կյանքի նախապատրաստական հիմունքներ» առարկանները, իսկ «Քույրական գործ» ՄԿԾ-ում՝ «Ընտանեկան բուժքույրություն» առարկան: Անհրաժեշտ է նշել, որ նախասիրական առարկանները չեն դասավանդվում՝ պայմանավորված քոլեջի սահմանափակ ֆինանսական ռեսուրսներով:

Բոլոր ՄԿԾ-ներում առանձնացված են հետևյալ երեք պրակտիկաները՝ ուսումնական պրակտիկա (9 շաբաթ տևողություն), արտադրական պրակտիկա (7շաբաթ տևողություն) և նախաարտադրական պրակտիկա (4 շաբաթ տևողություն): Վերը նշված բոլոր պրակտիկաններն իրականացվում են գործատուների մոտ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ պրակտիկաների ծրագրերը դեռևս վերանայված չեն՝ ըստ նոր մոդուլային ծրագրերին համապատասխան, այն պլանավորվում է քոլեջի կողմից իրականացվել մոտ ժամանակներս:

Քոլեջում դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն որպես այդպիսի առկա չէ, դասախոսական անձնակազմն ազատ է դասավանդման մեթոդի ընտրության հարցում: Դասալսումներից պարզ դարձավ, որ ընդհանրական և առանցքային վերջնարդյունքներ ձևավորող մոդուլների դասավանդման ժամանակ հիմնականում կիրառվում է թելադրությունների և հարց ու պատասխանների մեթոդը: Փորձագիտական հանդիպումներից և դասալսումներից պարզ դարձավ, որ ուսանողները երբեմն կաշկանդված են արտահայտելու իրենց կարծիքը և առաջարկությունները:

Ինտերակտիվ մեթոդների (սահիկաշարերի կիրառման, վիդեոդասերի ցուցադրման) լիարժեք օգտագործման համար քոլեջի ռեսուրսային բազան դեռևս ամբողջությամբ չի բավարարում: Որոշ դասախոսներ օգտագործում են նաև ինտերակտիվ մեթոդներ, օրինակ՝ օտար լեզվի (անգլերենի) դասավանդման ընթացքում իրականացվում են դերային խաղեր՝ հիվանդ-բուժքույր հաղորդակցումը կրկնօրինակելու համար: «Քույրական գործ» ՄԿԾ-ում բժիշկ դասախոսները կազմակերպում են նաև կլինիկական դեպքերի քննարկումներ, նրանց կողմից ներկայացվում են ախտանշանները, իսկ ուսանողները նշում են, թե որ դեպքում ինչպիսի դեղամիջոցներ կարելի է կիրառել: Ուսանողներին խմբային զրուցարանների միջոցով ուղարկվում են տարբեր տեսանյութեր կապված առաջին բուժօգնության, արյունահոսության դադարեցման կամ այլ բժշկական դեպքերի վերաբերյալ: «Քույրական գործ» ՄԿԾ-ի շրջանակներում ուսանողներն իրականացնում են տարբեր մանիպուլացիաններ՝ մկանային, ներերակային ներարկումներ, կոտրվածքների անշարժացում և այլն, ուսանողների ոչ մեծ քանակությունը (ամեն կուրսում 5-12 հոգի) թույլ է տալիս յուրաքանչյուր ուսանողի մանիպուլացիան իրականացնել այնքան, մինչև կարողանա

այն հաջողել։ Քոլեջում առկա չեն մանիպուլացիաների իրականացման համար նախատեսված գնահատման թերթիներ։ Անհրաժեշտ է նշել, որ ուսանողների նմանատիպ աշխատանքները գնահատվում են միայն դասախոսի կողմից հետադարձ կապի ապահովման միջոցով՝ որքանով ուսանողը մանիպուլացիան ճիշտ կատարեց, թե ոչ։ «Բուժական կոսմետոլոգիա» ՄԿԾ-ի ուսանողներն գործնական աշխատանքներն իրականցնում են քոլեջում, մասնավորապես՝ եղունգների մշակում, գեղարվեստական ձևավորում և այլն։ «Դեղագործություն» ՄԿԾ-ի շրջանակներում ուսանողները կարդում են դեղատոմսեր, պատրաստում են մոմիկներ, քսուքներ, դեղափոշիներ, թուրմեր, լուծամզվածքներ և այլն։

Դասալսումներից և փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական և առանցքային հմտություններ ձևավորող առարկաներն իրենց բովանդակությամբ ամբողջությամբ չեն հարմարեցվում տվյալ ՄԿԾ-ի առանձնահատկություններին և համատեքստին. օրինակ՝ «Դեղագործություն», «Քույրական գործ», «Բուժական կոսմետոլոգիա» և մնացյալ մյուս ծրագրերում «Էկոլոգիայի և լանդշաֆտագիտության հիմունքներ», «Քաղաքագիտություն» և նմանատիպ այլ առարկանները ներկայացվում են նույն ձևով, ուսանողների համար հաճախ տեսանելի չի լինում այս առարկանների ազդեցությունը նկապն իրենց մասնագիտությունների հետ։

Նախորդ հավատարմագրման փորձագիտական խումբը քոլեջին տրամադրել է խորհրդատվություն հատուկ մասնագիտական դասընթացներն իրականացնել գործատուների մոտ։ Անհրաժեշտ է նշել, որ քոլեջն իրականացրել է խորհրդատվությունը և Վարդենիս բժշկական կենտրոնում ձեռք է բերել լսարան, որտեղ «Քույրական գործ» ՄԿԾ-ի ուսանողներն իրականացնում են իրենց մասնագիտական դասընթացները և գործնական ժամերը։ Ուսանողները հնարավորություն ունեն իրենց գործնական կարողությունները զարգացնել հիվանդանոցում՝ շփվելով իրական հիվանդների հետ։ Հիվանդների թույլտվությամբ և բուժքույրերի վերահսկողությամբ ուսանողներն իրականցնում են ներարկումներ, վիրակապումներ, դասավորում են բժշկական գործիքները և այլն։ Որոշ ուսանողներ հնարավորություն են ունենում նաև մասնակցել վիրահատական գործողությունների՝ որպես բուժքույրերի և բժիշկների օգնականներ։ Նման առաջադրանքները թվային գնահատում չեն ենթադրում, ուսանողներին պարզապես տրամադրվում է հետադարձ կամ գործողությունը ճիշտ կամ սխալ իրականացնելու վերաբերյալ։

Քոլեջն ունի մշակված ուսանողի գիտելիքի ստուգման, գնահատման և բողոքարկման ընթացակարգ (2022թթ.)։ Ուսանողների գնահատումն իրականացվում է թեստերի, ռեֆերատիվ աշխատանքների միջոցով։ Անհրաժեշտ է նշել, որ հիմանակնում առարկաների մեծ մասի գնահատումն առավելապես իրականացվում է պարզապես ռեֆերատների բանավոր հարցման ձևով, իսկ գործնական առաջադրանքներ հանձնարարվում են հազվադեպ, ոչ բոլոր առարկաներից։

Ընթացիկ քննությունների քննատոմսերի ուսումնասիությունը ցույց տվեց, որ ուսանողների գիտելիքները ստուգվում և գնահատվում են երեք հարց ընդգրկող հարցատոմսերի միջոցով, որոնք գնահատում են միայն տեսական գիտելիք։ Գործնական կարողությունները գնահատող հարցեր նախատեսված չեն։ Ամփոփիչ ատեստավորման քննությունների հարցաշարերում տեղ գտած հարցերը նույնպես տեսական բնույթի են։ Ամփոփիչ

ատեստավորմանը ներկա են լինում վեց մասնագետ, որոնցից երեքը գործատուներն են, երեքը՝ համալսարանի աշխատակազմից: Բացի հարցաթերթիկներում եղած հարցերից, հանձնաժողովը կարող է տալ հավելյալ հարցեր տոմսի հարցերի շրջանակներում, որի միջոցով կարող են ստուգել ուսանողի մասնագիտական կարողությունները և հմտությունները՝ ուսանողի կողմից տեսական ներկայացման միջոցով:

2022թ. ՄՈՒՀ-ը մշակել և ներդրել է «Հետազոտական աշխատանքների պատրաստման և ներկայացման կանոնակարգը», համաձայն որի, ռեֆերատի գնահատման ընդհանուր միավորի 20%-ը տրվում է թեմայի արդիականության հիմնավորման համար, 30%-ը տրվում է բանավոր ներկայացման, թեմային առնչվող հարցերին պատասխանելու համար, իսկ 50%-ը տրվում է ինքնուրույնության համար: Ուսանողները ռեֆերատներ ներկայացնում են «Քույրական գործ», «Անատոմիա», «Թերապիա», «Հայոց լեզու և խոսքի մշակույթ» թեմաներից և առարկաններից: Ռեֆերատների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ ռեֆերատներում առկա չէ թեմայի արդիականությունը հիմնավորող մաս, ինքնուրույն վերլուծված և վերջնական եզրակացությունների բաժինները հիմնականում բացակայում են: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ռեֆերատները գնահատվում են միայն ուսանողների բանավոր ներկայացման հիման վրա:

Քոլեջը 2022թ. ներդրել է նաև ակադեմիական ազնվության քաղաքականության ընթացակարգ, որտեղ որոշակիորեն ձևակերպված են գրագողության պատճառները, տեսակները և դրանց նկատմամբ կիրառվող պատժամիջոցները: Հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ վերոնշյալ ընթացակարգը առայժմ չի կիրառվում, չկա գրագողության բացահայտման համար նախատեսված որևէ գործիքակազմ, դասախոսը չի ստուգում, թե կատարված աշխատանքի որ մասն է հանդիսանում բացառապես ուսանողի ինքնուրույն աշխատանքը: Ընթացակարգում անդրադարձ արված չէ գրագողության բացահայտման գործիքներին և մեխանիզմներին:

Պրակտիկանների գնահատումը տեղի է ունենում գործատուների կողմից, ուսանողների կողմից լրացվող օրագրերի հիման վրա: Գնահատման ընթացքում հաշվի են առնում ուսանողների ակտիվությունը, մասնակցությունը, սակայն առկա չեն ուսանողների գնահատման հստակ չափանիշներ:

Քույրական գործ ՄԿԾ-ի շրջանակներում քոլեջը 2022թ. իրականացրել է համեմատական վերլուծություն Հենակետային պետական բժշկական քոլեջի և Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի հետ «Քույրական գործ» ՄԿԾ-ի շրջանակներում: Համեմատվել են ՎԲՀՔ-ի բժշկական առարկայական ծրագրերը մյուս քոլեջների մոդուլային ծրագրերի հետ: Արդյունքում նկատելի է եղել, որ մոդուլային ծրագրերով դասավանդող ուսումնական հաստատություններում պրակտիկանները երկու անգամ ժամաքանակով ավելի շատ են եղել: Նաև տարբերություններ են եղել ավարտական քննությունների գնահատման համակարգում, ՎԲՀՔ-ում գնահատումը 10 բալանոց համակարգով է, մյուս քոլեջներում՝ 20: Արդյունքում, քոլեջը որոշում է կայացրել անցնել մոդուլային ուսուցման, որի արդյունքում պրակտիկաների շաբաթներն ավելացվել են ևս չորսով:

2022թ. ՄՈՒՀ-ը մշակել է կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման և վերանայման ընթացակարգ: Վերջինիս համաձայն ՄԿԾ-ները մշտադիտարկվում են յուրաքանչյուր տարի հանձնաժողովի կողմից: Հանձնաժողովում ընդգրկվում են ամբիոնի վարիչները, դասախոսները, ՈւԽ անդամները և ՈԱ պատասխանատուն: Մշտադիտարկումն իրականացվում է դասալսումների արդյունքների, ուսանողների և դասախոսների հետ

հաղորդակցությունների, հարցումների միջոցով ստացված տեղեկատվության հիման վրա։ Քոլեջում մոդուլային ծրագրերը ներդրվել են 2023թ. և դրանք դեռևս չեն մշտադիտարկվել։

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ՎԲՀՔ-ն իրականացնում է տարածաշրջանի կարիքներից բխող կրթական ծրագրեր, որոնք միևնույն ժամանակ համապատասխանում են քոլեջի առաքելությանը և ՀՀ ՈԱՇ-ի պահանջներին։ Արժեքավոր է գործատուների ներգրավվածությունը մոդուլային կրթական ծրագրերի մշակման գործընթացում, որը նպաստում է աշխատաշուկայի կարիքների վերհանմանը և գործատուների պրակտիկ փորձառության ներդրմանը։ Դեղագործություն ՄԿԾ-ում եղած լավ փորձը կարող է տարածվել նաև մյուսներում։

Դրական է, որ ՄԿԾ-ներում ներդրվել է ընտրովի առարկա, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ ընտրովի առարկաների ընտրությանը նպատակահարմար կլիներ ներգրավել նաև գործատուներին և ուսանողներին։

Չնայած նրան, որ քոլեջում ներդրված չէ ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, այդուհանդերձ դասախոսական կազմը փորձում է ավանդական մեթոդներին զուգահեռ կիրառել նաև գործնական կարողություններ ձևավորող ինտերակտիվ մեթոդներ։ Փորձագիտական խումբը նշում է, որ անհրաժեշտություն է նկատվում առավել շատ կիրառել այնպիսի դասավանդման մեթոդներ, որոնք կնպաստեն ուսանողների քննադատական և վերլուծական մտքի զարգացմանը։ Այս տեսանկյունից առավել նպատակահարմար կլինի իրականացնել խնդրի վրա հիմնված ուսուցում (problem based learning), տարբեր բժշկական դեպքերի ուսումնասիրություններ, որոնց հիման վրա կարելի կլինի կազմակերպել նաև բանավեճեր, քննարկումներ և այլն։ Հետազոտական և ինքնուրույն աշխատանքներում նույնպես անհրաժեշտ է ընդգծել ուսանողի ինքնուրույնությունը՝ առավել կենտրոնանալով ուսանողների կողմից հավաքագրված տեղեկատվության վերլուծության և մեկնաբանման վրա։ Վերջիններս կարող են նպաստել ուսանողի՝ խնդրալուծման կարողության զարգացմանը և ակադեմիական ազնվության պահպանմանը։

Փորձագիտական խումբը կարևորում է ընդհանուր հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և ընդհանուր բնագիտական և առանցքային հմտություններ ձևավորող առարկաների բովանդակության հարմարեցումը ՄԿԾ-ների առանձնահատկություններին, որը կնպաստի միջառակայական կապերի պահպանմանը և ուսանողների կողմից ստացված գիտելիքների և կարողությունների առավել արժևորմանը։

Դրական է, որ քոլեջում դասավանդում են բժիշկ դասախոսներ, որոնք ուսանողներին փորձում են սովորեցնել պրակտիկ դեպքերի հիման վրա։ Այս դեպքերը քոլեջի կողմից կարող են արձանագրվել և վերածվել խնդիրների շտեմարանի։ Վերջինս կնպաստի քոլեջում առաջադրանքների և խնդիրների բազայի ձևավորմանը, որը կապահովի ուսանողի վերլուծական և մասնագիտական մտքի ձևավորմանը և զարգացմանը՝ անկախ դասախոսի առկայությունից։

Ինչ վերաբերում է ուսանողի գնահատմանը, ապա դրական է, որ ուսանողներին գնահատելիս դասախոսական կազմը հիմնվում է հետադարձ կապի վրա, որը հնարավորություն է ընձեռում ուսանողին շտկելու իր սխալները տեղում, միևնույն ժամանակ, փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների քանակի ավելացման դեպքում անհրաժեշտություն կլինի ունենալու գնահատման թերթիկներ, որոնք կնպաստեն

գնահատման գործընթացի համակարգմանը: Փորձագիտական խումբը կարևորում է նաև ամփոփիչ ատեստավորման հարցաշարում գործնական կարողություն ենթադրող հարցերի առաջադրումը հանձնաժողովի անդամների կողմից, որի իրականացումը ցանկալի կլիներ կազմակերպել հիվանդանոցում, սակայն ուսանողը բանավոր նկարագրում է գործնական կարողության կատարման քայլերը:

Դրական է, որ քոլեջը փորձել է իրականացնել մյուս ՄԿՈՒ հաստատությունների հետ համեմատական վերլուծություն ուսումնական պլանների մակարդակում, փորձագիտական խումբը խրախուսում է շարունակել այդ գործընթացներն իրականացնել նաև առավել խորքային մակարդակներում՝ դասավանդման և ուսումնառության մեթոդներից մինչև գնահատման մեթոդներ (առաջադրանքներ, գնահատման թերիկներ (check list) և այլն), վերջինս կնպաստի դրական փորձի բացահայտմանը և տարածմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՊԿՉ-ները վերամշակվել են և ներդրվել որպես ՄԿԾ-ներ, գործընթացում հաշվի են առնվել գործատուների և դասախոսների կարիքները և վերհանած խնդրները, որոշ դասախոսներ կիրառում են դասավանդման ինտերակտիվ մեթոդներ, դասընթացների մի մասն իրականացվում է բժշկական կենտրոնում, որտեղ ուսանողները ականատես են լինում բժշկական իրական դեպքերի, քոլեջի կողմից իրականավցվել է ՄԿԾ բենչմարքինգ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը հիմնականում բավարարում է չափանիշ 3-ի պահանջները:

Եզրակացություն:

Փորձագիտական խումբը Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 3-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր: ՎԲՀՔ-ն ուսանողների հավաքագրման նպատակով Պրակտիկայի և կարիերայի պատասխանատուն, Ուսանողական խորհրդի անդամներն իրականացնում են այցելություններ Վարդենիս քաղաքի և հարակից գյուղերի դպրոցներ՝ ներկայացնելով քոլեջի կրթական ծրագրերը և քոլեջի տրամադրած ծառայությունները թռուցիկների և ներկայացումների միջոցով: Քոլեջում կազմակերպվում են նաև «բաց դռների օր», որի ընթացքում դպրոցի աշակերտները հնարավորություն են ունենում շրջել քոլեջում, ծանոթանալ քոլեջի դասախոսների հետ և մասնակցել նրանց կողմից վարվող դասընթացներին: Ընդունելության մասին տեղեկատվությունը տարածվում է նաև սոցիալական հարթակներով, գովազդներով և թռուցիկներով: Ընդունելությունն իրականացվում է առցանց՝ dimord.emis.am կայքի միջոցով: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսանողները հիմնականում ընտրում են Վարդենիսի

բժշկա-հումանիտար քոլեջը, քանի որ քոլեջի մասին լսել են դրական արձագանքներ իրենց ծնողներից, հարազատներից, ընկերներից, որոնք ավարտել են նույն հաստատությունը։

Քոլեջում ընդունելությունն իրականացվում է Կրթության և գիտության նախարարի 2012թ N254 հրամանի համաձայն: 3 կրթական ծրագրերի շրջանակներում՝ «Քույրական գործ», «Բուժական կոսմետոլոգիա» և «Դեղագործություն» ՄԿԾ-ների շրջանակներում ուսանողները հանձնում են բանավոր քննություն կենսաբանություն առարկայից։ Դրական շեմը հաղթահարածները կարող են իրենց կրթությունը շարունակել քոլեջում։ Ընդունելության հարցաշարերը կազմվում են քոլեջի մասնագետ դասախոսների կողմից։ Փորձագիտական այցից և դասալսումներից պարզ դարձավ, որ բժշկական ուղղվածությամբ ՄԿԾ-ներում սովորող ուսանողներն ունեն քիմիա և կենսաբանություն առարկաներից հիմնային գիտելիքների բարելավման կարիք։

«Սպասարկման կազմակերպում» և «Գրադարանային գործ» կրթական ծրագրում ուսանողներն ընդունվում են առանց մրցույթի, դպրոցի ատեստատներում եղած գնահատականների հիման վրա։ Անհրաժեշտ է նկատել, որ վերջին տարիներին արձանագրվում է ուսանողների քանակի աճ, 2021-2022 ուսումնական տարում Քոլեջն ունեցել է 54 ուսանող, 2022-2023 ուսումնակական տարում՝ 56, իսկ 2023-2024-ին՝ 93 ուսանող։ Ըստ քոլեջի կողմից իրականացված ընդունելության արդյունքների վերլուծության՝ առավել նպաստավոր պայմաններում են գտնվում «Քույրական գործ» և «Դեղագործություն» ՄԿԾ-ները։ Անհրաժեշտ է նշել, որ ուսանողների քանակի ավելացմանը նպաստել է նաև քոլեջի կողմից ներդրված հատուկ տրանսպորտը, որը ապահովում է ուսանողներին քոլեջ տեղաղափոխումը և հետվերադարձը բնակավայրեր։

Յուրաքանչյուր տարի ՎԲՀՔ-ից դուրս է մնում մոտ 5 ուսանող, որը հիմնականում պայմանավորված է ուսանողների անվճարունակությամբ, բացակայություններով և արտագաղթով։

Նախորդ հավատարմագրման արդյունքում փորձագիտական խումբը տրամադրել է խորհրդատվություն կատարելագործել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմները և ուսումնասիրել դրանց արդյունավետությունը։ Ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով քոլեջում գործում է կուրսղեկների խորհուրդը, որում ընդգրկված են բոլոր կուրսերի կուրսղեկները, խորհրդի նախագահը ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալն է։ Խորհուրդը քննարկում է ուսանողների ընթացիկ խնդիրները և կարիքները՝ կապված դասախոս-ուսանող հարաբերությունների, ուսանողների բացակայությունների և այլնի հետ։ Կարիքների վերհանման նպատակով քոլեջում իրականացվում են նաև անանուն հարցումներ, որոնք վերաբերում են կրթական գործընթացների արդյունավետությանը, ռեսուրսներից բավարարվածությանը և այլն։ Հարցումների արդյունքների հիման վրա իրականացվում է ռեսուրսային բազայի համալրում, օրինակ՝ քոլեջի կողմից կառուցվում է ինտերակտիվ լսարան, իրականացվում է դասախոսների կողմից կիրառվող մեթոդների վերանայում և այլն։ Ուսանողների կարիքների վերհանման մեկ այլ մեխանիզմ է Ուսանողական խորհորդը, որն ուսանողների կարիքների վեր հանման նպատակով կազմակերպում է հանդիպումներ, քննարկման հիմնական առարկա են դառնում վարձավճարների զեղչերը և այլն։ Անհրաժեշտ է նշել, որ ուսանողների առաջադիմության խրախուսման նպատակով քոլեջը ներդրել է զեղչային համակարգ, որը հնարավորություն է ընձեռում ուսանողներին ստանալու վարձավճարների զեղչեր 20%-ի չափով։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ

կարիքների վերհանման լավագույն մեխանիզմը ուսանողների շրջանում դիտարկվում են կուրսղեկները։

Ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար ՎԲՀՔ-ում ուսանողներին տրամադրվում են ընթացիկ խորհրդատվություններ ինչպես առցանց (սոցիալական խմբերի միջոցով), այնպես էլ անցանց (offline) եղանակներով, հարկ է նշել, որ այս գործընթացը համակաչգված չէ։ Ուսանողները ստանում են խորհրդատվություններ նաև քննաշրջանի շեմին և պետական ամփոփիչ ատեստավորումից առաջ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ խորհրդատվական ժամերը դասախոսի ծանրաբեռնվածության մաս չեն կազմում։ Ըստ քոլեջի տրամադրած տվյալների՝ ուսանողների 92.5%-ը տեղեկացված է խորհրդակցական ծառայությունների մասին, 36.8%-ը օգտվում է դրանցից, 95%-ը գոհ է։ Ինչ վերաբերում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպմանը, ապա փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջի ղեկավարությունը պլանավորում է բարձր առաջադիմություն ցուցաբերող և ուսումը շարունակել ցանկացող ուսանողների համար կազմակերպել անգլերեն լեզվի խորացված մասնավոր պարապմունքներ լեզուների ուսուցման կենտրոններում։ Վերջինս ֆինանսավորվելու է Քոլեջի կողմից։

ՎԲՀՔ-ում սահմանված է վարչական անձնակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց, փորձագիտական այցից պարզ դարձավ, որ սահմանված ժամանակացույցից զատ, ուսանողները ցանկացած պահի կարող են դիմել ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալին, ամբիոնների վարիչներին և մեթոդիստին։ Ուսանողներն իրենց խնդիրներով հիմնականում դիմում են տնօրենի տեղակալին։ Ըստ ինքնավերլուծության տվյալների՝ ուսանողների 81.6%-ը տեղեկացված է իրեն վերաբերող վարչական ծառայությունների մասին, 91%-ը օգտվում է դրանցից, 85.7%-ը գոհ է։

ՎԲՀՔ-ում իր գործունեությունն է ծավալում Պրակտիկայի և կարիերայի պատասխանատուն։ Պատասխանատուն զբաղվում է պրակտիկաների վայրերի ձեռքբերմամբ, գործատուների հետ շփումներով և թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվության հայթայթմամբ, շրջանավարտների տվյալների բազայի ձևավորմամբ, շրջանավարտների հետ հետադարձ կապի ապահովման աշխատանքներով։ Անհրաժեշտ է նշել, որ քոլեջում առկա է շրջանավարտների վերջին 3 տարիների բազան։ Ըստ ՎԲՀՔ-ի տրամադրած տվյալների՝ շրջանավարտների զբաղվածությունը 2019-2020 ուսումնական տարում կազմել է 69%, 2020-2021-ին՝ 45.8%, 2021-2022-ին՝ 50%, իսկ 2022-2023-ին ՝ 54%։ Կարիերայի տեսանկյունից իրենց մասնագիտությամբ առավել շատ աշխատանք են գտնում «Քույրական գործ» և «Դեղագործություն» ծրագրերի շրջանավարտները։ Շրջանավարտների աշխատանք գտնելուն նպաստում է նաև քոլեջի Կարիերայի պատասխանատուն՝ ապահովելով կապ գործատուների և շրջանավարտների միջև։

Քոլեջում ուսանողների համար չեն կազմակերպվում կարիերային նպաստող դասընթացներ, որոնք կնպաստեն գործատուին ներկայանալուն, սեփական ինքնակենսագրականը կազմելուն և հարցազրույցի ճիշտ ներկայանալու հմտությունների ձևավորմանը։ Ըստ քոլեջի տրամադրած տվյալների՝ ուսանողների 82.56%-ը տեղեկացված է կարիերային նպաստող ծառայությունների մասին, 26%-ը օգտվում է, իսկ 73%-ը գոհ է դրանցից։

Նախորդ հավատարմագրման արդյունքում փորձագիտական խումբը տրամադրել է խորհրդատվություն զարգացնելու ուսանողների հետազոտական կարողությունները,

ձևավորել նրանց մոտ քննադատական մտածողություն։ Ինչպես բազմիցս նշվեց փորձագիտական այցին, քոլեջի ուսանողները մեծամասամբ փակ են և լիարժեք չեն արտահայտում իրենց մտքերը, գաղափարները և ցանկությունները։ Ուսանողների հետազոտական կարողությունները զարգացնելու նպատակով դասախոսներն ուսանողներին մոդուլների շրջանակներում առաջադրում են ռեֆերատային աշխատանքներ, օրինակ Դեղագործություն ՄԿԾ-ի «ֆարմակագնոզիա» մոդուլի շրջանակներում ուսանողները ռեֆերատների ձևով ներկայացնում են դեղաձևերը և դեղաբույսերից դեղերի ստացումը, նույն մոդուլի շրջանակներում ուսանողները հավաքագրում են նաև դեղաբույսեր, որոշում են դրանց տեսակը, օգտակար հատկությունները։ «Քույրական գործ» ՄԿԾ-ում ուսանողները ներկայացնում են ռեֆերատներ կապված արյան խմբերի, ներարկումների, վերջիններիս սխալ կատարման և դրա հետևանքների մասին։ Անհրաժեշտ է նշել, որ քոլեջում հետազոտական կարողություն ձևավորող առաջադրանքները սահմանափակվում են միայն մի քանի մոդուլների շրջանակներում և լայն տարածում չունեն։ Բացի այդ փորձագիտական խմբին ներկայացված ռեֆերատային աշխատանքներում բացակայում է ուսանողի ինքնուրույն միտքը և եզրակացությունը։

Ուսանողների իրավունքները սահմանվում են ներքին իրավական ակտերում, ուսանողի և քոլեջի միջև կնքվող պայմանագրերով։ Ըստ ինքնավերլուծության՝ քոլեջում ուսանողների իրավունքների ներկայացման ու պաշտպանության իրականացման պատասխանատու մարմինը Ուսանողական խորհուրդն է, որը գործում է իր կանոնադրության համաձայն։ Խորհրդի անդամներն ընտրվում են ուսանողների և կուրսղեկների առաջադրմամբ։ Ընտրության ժամանակ հաշվի է առնվում ուսանողի ցանկությունը, առաջադիմությունը և ակտիվությունը։ Խորհրդի նախագահին ընտրում են քոլեջի ուսանողները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՈւԽ-ն կազմակերպում է տարբեր էքսկուրսիաներ, ժամանցային միջոցառումներ։ Անհրաժեշտ է նշել, որ քոլեջի ուսանողները պասիվ են ներգրավված Խորհրդի աշխատանքներում, ՈւԽ անդամներին դեռևս չի հաջողվում գտնել ճանապարհներ ուսանողներին ակտիվացնելու համար։

Տրամադրվող կրթական և այլ ծառայությունների գնահատումն իրականացվում է ներքին և արտաքին շահակիցների շրջանում իրականացվող տարաբնույթ հարցումների արդունքում։ Հարցումները վերաբերում են դասավանդման որակին, դասավանդվող մեթոդներին, վարչական աշխատակիցների աշխատանքի արդյունավետությանը և այլն։

Դատողություններ։ Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ դիմորդների հավաքագրման նպատակով ՎԲՀՔ-ն վերջին տարիներին դրսևորում է ակտիվություն և համագործակցում է տարածաշրջանի դպրոցների հետ, դպրոցի աշակերտներին հնարավորություն է ընձեռնվում ներկա գտնվելու քոլեջում իրականացվող դասընթացներին, ինչպես նաև քայլեր են ձեռնարկվել ուսանողների տեղափոխումն ապահովելու համար. այս բոլոր գործոնները նպաստել են ուսանողների քանակի ավելացմանը։ Փորձագիտական խումբը գտնում է, որ ուսանողների քանակական բարելավման համար ՎԲՀՔ-ն կարող է պատրաստել նաև կարճ տեսահոլովակներ, որտեղ ուսանողները կարող են ներկայացնել իրենց մասնագիտական դասընթացների, պրակտիկաների ընթացքը, իսկ շրջանավարտներն՝ իրենց մասնագիտական հաջողությունները։

Չնայած նրան, որ բժշկական մասնագիտությունների ուղղությամբ, դիմորդները հանձնում են բանավոր քննություններ, որոնք ապահովում են որոշակի մուտքային

տվյալների առկայությունը, փորձագիտական խումբը նշում է, որ ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման տեսանկյունից կամ անհրաժեշտ է հարցաշարերը կազմել առավել բարդ հարցերից, կամ ընթացիկ հավելյալ պարապմունքների միջոցով բարելավել ուսանողների գիտելիքները քիմիա և կենսաբանություն առարկաներից, որոնք անհրաժեշտ են նրանց հետագա մասնագիտական կարողություններն առավել հիմնային զարգացնելու համար:

Գովելի է, որ ուսանողների կարիքների բացահայտման նպատակով քոլեջում իրականացվում են տարբեր գործընթացներ, որոնք նպաստում են ուսանողների կարիքների դուրսբերմանը և դրանց լուծմանը:

Դրական է, որ ուսանողներին տրամադրվում են խորհրդատվական որոշակի ծառայություններ: Խորհրդատվական աշխատանքների պլանավորումը կնպաստի բոլոր ուսանողների ներգրավվածությանը և նրանց առաջընթացին: Իսկ ինչ վերաբերում է հավելյալ պարապմունքների կազմակերպմանը ուսանողների օտար լեզվի զարգացման ուղղությամբ, ապա փորձագիտական խումբը նշում է, որ այն գովելի նախաձեռնություն է քոլեջի կողմից, այնուամենայնիվ փորձագիտական խումբը գտնում է, որ նման վերապատրաստումների հնարավորություն պետք է ընձեռնվի բոլոր կրթական ուսանողների համար:

Լրացուցիչ պարապմունքների կազմակերպումը ուսանողների համար կնպաստի փոխանցելի հմտությունների ձևավորմանը, որն էլ իր հերթին կարևոր է աշխատաշուկայում շրջանավարտների մրցակցության բարձրացմանը: Փորձագիտական խումբը դրականորեն ընգծում է, որ քոլեջը հետևում է շրջանավարտների աշխատանքի տեղավորման վիճակագրությանը: Միևնույն ժամանակ նշում է, որ առավել արդյունավետ կլինի ուսումնասիրելու նաև շրջանավարտի հետագիծը, թե ինչպիսի խնդիրների է ուսանողը բախվում աշխատավայրում, ինչպիսի հմտություններ կցանկանար, որ քոլեջում առավել զարգացրած լինեին և այլն, այս ամենը կնպաստի նաև ՄԿԾ-ների թիրախային բարելավմանը:

Ուսանողներին հետազոտական և վերլուծական առաջադրանքների տրամադրումը կնպաստի նրանց քննադատական մտածողության ձևավորմանը, հնարավորություն կընձեռի վերլուծել իրենց տրամադրված տեղեկատվությունը, գնահատել տարբեր աղբյուրների տրամադրած նյութերի վավերականությունն ու հավաստիությունը: Քննադատական մտածողությունը կնպաստի ուսանողների որոշումներ կայացնելու, խնդիրներին տրամաբանական և ռացիոնալ լուծումներ գտնելուն:

Դրական է, որ քոլեջում գործում է Ուսանողական խորհուրդ, որը նպաստում է ուսանողական միջավայրի ձևավորմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ կառույցի ներսում տարբեր ակումբների ձևավորումը (տեղեկատվական, սպորտային և այլն), այլ ՄԿՈՒ հաստատությունների ՈՒԽ կառույցների հետ համագործակցությունը կարող է նպաստել ՈՒԽ աշխատանքների ակտիվացմանը և մյուս ուսանողների հետաքրքրության մեծացմանը կառույցի աշխատանքների նկատմամբ:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջն ունի ուսանողների հավաքագրման և ընդունելության հստակ քաղաքականություն, վերջին տարիներին արձանագրվում է ուսանողների քանակի ավելացում, առկա են ուսանողների կրթական կարիքների վերհանմանը նպաստող որոշակի մեխանիզմներ, վարչական աշխատակիցները մշտապես հասանելի են ուսանողներին օժանդակություն տրամադրելու համար, ուսումնասիրվում է շրջանավարտների աշխատանքի ընդունվելու ցուցանիշները, առկա է վերջին 3 տարիների շրջանավարտների բազա, քոլեջում գործում է ուսանողների իրավունքները ներկայացնող

խորհուրդ, ինչպես նաև կիրառվում են մատուցվող ծառայությունների որակի ապահովման որոշակի գործիքակազմ՝ փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը **բավարում է** Չափանշ 4-ի պահանջներին։

Եզրակացություն: ՎԲՀՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը Չափանիշ 4-ի գնահատվում է **բավարար**։

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր: Նախորդ հավատարմագրման փորձագիտական խումբը ուսումնական հաստատությանը տրամադրել է խորհրդատվություն ներդնել ՊԴ և ՈւՕ կազմի ընտրության մրցութային կարգ լավագույն կադրերի ներգրավման նպատակով։ Կադրերի ընտրության նպատակով 2021թ. քոլեջը մշակել է մարդակային ռեսուրսների կառավարման քաղաքականություն, որի նպատակը եղել է դասախոսի մրցութային կարգով ընդունելության կազմակերպումը։ Կարգն իր լիարժեք կիրառությունը չի կարողացել գտել՝ պայմանավորված տարածաշրջանի սահմանային գոտի դառնալով և եղած մասնագետների սղությամբ։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմն աշխատանքի է ընդունվում քոլեջի ղեկավարության հրավերով։ ՎԲՀՔ-ն ունի 28 դասախոս, որից 16-ը հիմնական դասախոսներ են, իսկ 15-ը՝ համատեղող։ Դասախոսներից 9 պրակտիկ ոլորտի դասախոսներ են, որոնք աշխատում են դեղատներում, Վարդենիսի ԲԿ-ում, ՀՀ ՊՆ կայազորային հոսպիտալում, պոլիկլինիկաներում։ Դասախոսական կազից 1-ը գիտությունների թեկնածու է։ Դասախոսական հիմնական կազմի հետ կնքվում է անժամկետ պայմանագիր, իսկ համատեղող դասախոսների հետ՝ ժամավճարային պայմանագրեր։ Թե՛ հիմնական, թե՛ ժամավճարային հիմունքներով ընդունված դասախոսական կազմը վճարվում է նույն սկզբունքով (մեկ ակադեմիական մուտքը 1600 դրամ)։ Վերջին 3 տարիներին աշխատանքից ազատվել է 13 դասախոս՝ իրենց սեփական դիմումի համաձայն։ Վերջին երկու տարում աշխատանքի է ընդունվել 10 դասախոս։

Դասախոսական կազմի ընտրությունն իրականացնելիս քոլեջը հաշվի է առնում ՊԿՉ հիմնական պահանջները՝ որակավորում, աշխատանքային փորձ և այլն։ Նախորդ հավատարմագրման փորձագիտական խումբը քոլեջին նաև տրամադրել է խորհրդատվություն հստակեցնելու կրթական ծրագրերի նպատակներին համապատասխան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջները։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ քոլեջը ընդհանուր և հատուկ մասնագիտական մոդուլների դասախոսական կազմի ընտրության ժամանակ կարևորում է մասնագետի աշխատանքային փորձը տվյալ ոլորտում, օրինակ՝ «Քույրական գործը վիրաբուժությունում»

մոդուլը դասավանդում է պրակտիկ վիրաբույժը, «Քույրական գործը ակնաբուժությունում»՝ ակնաբույժը և այլն: Այս քաղաքականությունը որևէ փաստաթղթում ամրագրված չէ:

Դասախոսական կազմի գնահատման հիմնական մեխանիզմներն են՝ դասալսումները, փոխադարձ դասալսումները և ուսանողների շրջանում իրականացվող հարցումները: Քոլեջում առկա է դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգ: Ըստ կանոնակարգի՝ դասալսումներն իրականացվում է հանձնաժողովի կողմից, որտեղ պարտադիր պետք է ներառված լինի ամբիոնի վարիչը: Հանձնաժողովում կարող են ընդգրվել նաև ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալը, դասախոսները, մեթոդիստը, ՈԱ պատասխանատուն, ՈւԽ անդամները, արտաքին փորձագետները: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ հանձնաժողովներով դասալսումների մշակույթ քոլեջում դեռևս առկա չէ: Ամբիոնի վարիչների կողմից կիսամյակի սկզբին կազմվում է դասալսումների ժամանակացույց, որը հաստատվում է ամբիոնի նիստերի ժամանակ: Դասի գնահատման ձևաթղթերի և դրանց վերլուծությունների ուսումնասիրությունից պարզ դարձավ, որ դասալսման ընթացքում դասալսողները կարևորում են դասախոսի կողմից կիրառվող մեթոդները, դասախոսի վերաբերմունքն ուսանողների նկատմամբ, վարքը, վարվեցողությունը և այլն: Վերը նշված փաստաթղթերում բարելավման էական առաջարկություններ կամ դիտարկումներ ներկայացված չեն:

Քոլեջը նախատեսում է դասախոսական անձնակազմի աշխատանքի արդյունավետության համակարգային գնահատում իրականացնել 2023-2024 ուստարվա վերջում: Փորձագիտական այցի պարզ դարձավ, որ դեռևս առկա չէ լիարժեք պատկերացում, թե ինչպես է իրականացվելու գործընթացը: Միևնույն ժամանակ ՄՈՒՀ-ը արդեն մշակել է վերոնշյալ գործընթացներն իրականացնելու կարգը:

ՎԲՀՔ-ն 2022թ. մշակել է դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի վերապատրաստման կանոնակարգ: Ըստ կանոնակարգի՝ հիմնական դասախոսական և ուսումնաօժանդակ կազմը պարտավորվում են հինգ տարին մեկ անգամ անցնել վերապատրաստումներ: Նախորդ՝ 2022-2023 ուստարվա ընթացքում քոլեջի մասնագետները /12 դասախոս/ մասնակցել են ՄԿՈՒԶԱԿ-ի վերապատրաստումներին, որը նախաձեռնվել է քոլեջի կողմից: Վերապատրաստումները եղել են մեթոդական բնույթի և վերաբերել են մոդուլային ծրագրերի տեղայնացմանը: Որոշ դասախոսներ սեփական նախաձեռնությամբ գտնում և մասնակցում են առցանց մասնագիտական վեբինարների, դասընթացների: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է նշել, որ դասախոսական կազմի մի մասը պրակտիկ բժիշկ մասնագետներ են, որոնց մասնագիտական շարունակական զարգացումը տեղի է ունենում հիվանդանոցի պահանջների շրջանակներում: Մասնագիտական վերապատրաստումների անհրաժեշտությունը հատկապես նկատելի է քոլեջի հիմնական դասախոսական կազմի մոտ: Ըստ քոլեջի 2022թ. բյուջեի՝ վերապատրաստումներին տրամադրվել է տարեկան 70.000 դրամ:

Ինչ վերաբերում է դասախոսական կազմի կայունությանը, ապա անհրաժեշտ է նշել, որ դասախոսական կազմը վերջին երեք տարիներին երիտասարդացել է: Նեղ բժշկական մասնագիտական առարկաները և մոդուլները դասավանդում են պրակտիկ բժիշկները՝ տեսական ժամերը քոլեջում, իսկ գործնականները՝ մասնագիտական կլինիկաներում: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ դասախոսական կազմի կայունությունն ապահովելու նպատակով քոլեջի ղեկավարությունը 2023-2024 ուստարվա ընթացքում ծրագրել է 20%-ի չափով բարձրացնել ամբողջ անձնակազմի աշխատավարձերը: ՎԲՀՔ-ն ունի

նաև դասախոսական կազմի ռեզերվ, որտեղ ներգրավված են 8 մասնագետներ սերվիսի, տնտեսագիտության, տուրիզմի կառավարման և այլ ոլորտներից:

Քոլեջում դասախոսական անձնակազմի պաշտոնի առաջընթաց վերջին տարիներին տեղի չի ունեցել: ՄՈՒՀ-ում ներդրվել է դասախոսական և ՈւՕ անձնակազմի խրախուսման ընթացակարգ, վերջիններս պարգևատրվում են շնորհակալագրերով և փոքրիկ հուշանվերներով: Դրամական պարգևատրումներ որպես այդպիսին տեղի չեն ունենում: Նոր ընդունված դասախոսական կազմին ուղղորդում ցուցաբերելու համար, քոլեջում գործում է մենթորության համակարգը, երբ առավել փորձառու մասնագետները նպաստում են նոր ընդունված դասախոսական կազմի հարմարմանը: Մենթորները նոր ընդունված աշխատակազմին ծանոթացնում են մոդուլային համակարգին, գրագրությանը և այլն:

Քոլեջն ունի վարչական 6 աշխատակից՝ տնօրեն, ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ, որակի պատասխանատու, կարիերայի և պրակտիկայի պատասխանատու, կադրերի բաժնի վարիչ, հաշվապահ: Ուսումնաօժանդակ կազմը բաղկացած է 4 անձից: Փորձագիտական հանդիպումներից պարզ դարձավ, որ ուսումնաօժանդակ կազմը կարիք ունի համակարգչային կարողությունների զարգացման: Ընդհանուր առմամբ քոլեջի դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմը բավարարում է ՄՈՒՀ-ի ռազմավարական ծրագրի իրականացմանը:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ չնայած տարածաշրջանի ոչ այդքան հարմար դիրքավորմանը, քոլեջը կարողանում է գտնել ոլորտի մասնագետներ, որոնք ապահովում են ուսանողների մասնագիտական կրթության ստացումը: Դրական է, որ քոլեջի դասախոսական անձնակազմի գերակշռող մասը երիտասարդ մասնագետներ են, ինչպես նաև նրանց ⅓ մասը պրակտիկ ոլորտի ներկայացուցիչներ են, որը նպաստում է ուսանողների գործնական կարողությունների զարգացմանը: Բացի այդ, բոլոր մասնագիտական մոդուլները դասավանդվում են համապատասխան նեղ ոլորտի մասնագետների կողմից, որը նպաստում է ուսանողների կողմից իրական դեպքերի ուսումնասիրմանը և հիմնարար գիտելիքների ստացմանը:

Չնայած նրան, որ քոլեջը որևէ փաստաթղթում չի սահմանել կրթական ծրագրերի նպատակներին համապատասխան դասախոսական կազմի որակներին ներկայացվող պահանջներ, այնուամենայնիվ քոլեջն ունի տեսանելի քաղաքականություն, որտեղ առաջնահերթությունը մշտապես տրվում է դասախոսական կազմի գործնական կարողություններին և մասնագիտական գիտելիքներին, վերջինս նպաստում է աշխատաշուկայի կարիքների բացահայտմանը և քոլեջում մասնագիտական միջավայրի ձևավորմանը:

Քոլեջն ունի դասախոսական կազմի գնահատման որոշ մեխանիզմներ, այնուամենայնիվ դրանք դեռևս չեն դարձել համակարգի տարրեր, որոնք գործում են միասնության մեջ՝ ապահովելով խնդիրների վերհանմանը, որոշումների կայացմանը և խնդիրների լուծմանը: Փորձագիտական խումբը գտնում է, որ անհրաժեշտություն կա վերանայելու գնահատման մեխանիզմները՝ բացահայտելով դրանց արդյունավետությանը խանգարող գործոնները: Անհրաժեշտության դեպքում քոլեջը կարող է վերանայել հարցումների միջոցով ուսանողներին ուղղվող հարցերը, դասախոսների դասալսման ընթացքում կիրառվող հարցաթերթերը՝ ապահովելով տվյալների վերհանմանը:

Դրական է, որ քոլեջում գործում է մենթորության համակարգը, որը նպաստում է նոր ընդունված դասախոսական կազմի առավել հեշտ հարմարմանը: Փորձագիտական խումբը նշում է մենթորության համակարգի կարևորությունը նամանավանդ պրակտիկ մասնագետների համար, ովքեր չունեն մանկավարժական կրթություն և երբեմն կարող են դժվարանալ դասավանդման մեթոդների ընտրության, ուսանողների հետ հաղորդակցման հարցերում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ քոլեջը իր բյուջեից տրամադրում է միջոցներ դասախոսական անդձնակազմի տարեկան վերապատրաստումների համար, վերջինիս լիարժեք օգտագործումը կնպաստի դասախոսական կազմի մասնագիտական աճին: Այս պարագայում չափազանց կարևոր է նաև դասախոսական կազմի կարիքների բացահայտումը, որը կապահովի թիրախային վերապատրաստումների կազմակերպմանը և քոլեջի միջոցների արդյունավետ օգտագործմանը: Միաժամանակ գովելի է, որ քոլեջը նախաձեռնել է մեթոդական վերապատրաստումներ, որը նպաստել է մոդուլային ծրագրերի ներդրմանը: Փորձագիտական խումբը կարևորում է ոչ միայն դասախոսական, այլև վարչական և ուսումնաօժանդակ անձնակազմի փոխանցելի հմտությունների (համակարգչին տիրապետելը) զարգացմանը, որը կնպաստի աշխատաժամանակի ծավալի առավել արդյունավետ օգագործմանը: Այս խնդրի լուծումը հնարավոր է գտնել նաև ներքին վերապատրաստումների միջոցով:

Փորձագիտական խումբը դրական է համարում, դասախոսական կազմի ռեզերվի առկայությունը, գովելի է նաև, որ քոլեջը պլանավորել է «Սպասարկման կազմակերպում» (մասնագիտական մոդուլների դասավանդումը սկսելու է հաջորդ տարվանից) ՄԿԾ-ում դասավանդող մասնագետներին:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն, որ Վարդենիսի բժշկահումանիտար քոլեջը գտնվում է սահմանամերձ գոտում, դրանով հանդերձ կարողացել է հավաքագրել ոլորտում ակտիվ գործունեություն ծավալող դասախոսական կազմ, վերջին տարիներին նկատվում դասախսական կազմի երիտասարդացում, քոլեջի կողմից եղել է նախաձեռնողականություն վերապատրաստումների կազմակերպան, տրամադրվում է որոշակի բյուջե մասնագիտական վերապատրաստումների իրականացման ուղղությամբ, առկա է ուսանողների թվաքանակին համապատասխան ուսումնաօժանդակ կազմ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը **բավարարում է** չափանիշ 5-ի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 5-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր: «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջն» իր 2021-2026թթ. զարգացման ռազմավարական ծրագրում որպես 6-րդ ռազմավարական առաջնահերթություն դիտարկում է արդիական հետազոտությունները և նորարարությունը: Նախորդ հավատարմագրման արդյունքում փորձագիտական խումբը քոլեջին տրամադրել է խորհրդատվություն հստակեցնելու հետազոտական նպատակները, ընդլայնելու համագործակից կառույցների հետ հետազոտական ծրագրերը, մշակել հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցվածության հստակ մեխանիզմներ, հետազոտական աշխատանքներում ներգրավել նաև ուսանողներին: Նշված խորհրդատվությունները տեղ են գտել քոլեջի նոր ՌԾ-ում և դարձել են վերը նշված նպատակին հասնելու խնդիրները: Փորձագիտական այցից և շահակիցների հետ հանդիպումներից պարզ դարձավ, որ քոլեջն իր համար դեռևս չի սահմանել, թե ինչ է հետազոտությունը, նաև հետազոտության հետ կապված պատկերացումները դեռևս լիովին ձևավորված չեն:

Ուսանողների վերլուծական կարողությունները զարգացնելու նպատակով քոլեջը 2022թ. վերանայվել է հետազոտական աշխատանքների իրականացման կանոնակարգը: Կանոնակարգը սահմանում է, թե ինչ է հետազոտական աշխատանքը և ինչպիսի ձևաչափով այն պետք է ուսանողի կողմից ներկայացվի քոլեջին: Ըստ կանոնակարգի՝ ռեֆերատի գնահատման ընդհանուր միավորի 20%-ը տրվում է թեմայի արդիականության հիմնավորմանը, 30%-ը՝ բանավոր ներկայացմանը, թեմային առնչվող հարցերին պատասխանելուն, իսկ 50%-ը տրվում է ուսանողի ինքնուրույնությանը: Փորձագիտական հանդիպումներից և ռեֆերատների, կուրսայինների ուսումնասիրություններից պարզ դարձավ, որ ուսանողները բանավոր ներկայացնում են ռեֆերատները և գնահատվում, հետազոտական աշխատանքների համար սահմանված նկարագրությունը, ոչ բոլոր աշխատանքներում է պահպանված:

Հետազոտական աշխատանքների համար Քոլեջը տրամադրել է 80.000 դրամ:

Հետազոտական համատեղ գործունեություն իրականացնելու նպատակով քոլեջը համագործակցության պայմանագրեր է կնքել «Մարտունու պետական բժշկական քոլեջ»-ի, «Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ»-ի, «Գրիգորիս բժշկակ-հումանիտար քոլեջ»-ի հետ, պայմանագրերի շրջանակներում նախատեսվում է գիտական հանդիպումների կազմակերպում, գիտական գրականության փոխանակում, համատեղ ծրագրերի մշակում: Պայմանագրերի շրջանակներում Քոլեջը «Քույրական գործ» ՄԿԾ-ի շրջանակներում ստացել է մասնագիտական գրականություն «Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ»-ից, այլ գործընթացներ դեռևս տեղի չեն ունեցել:

Քոլեջի ուսանողները կրթական ծրագրերի շրջանակներում որպես հետազոտական աշխատանքներ ներկայացնում են ռեֆերատներ, կուրսայիններ, պատրաստում են պաստառներ: Կուրսային աշխատանքները և ռեֆերատները կամավորության սկզբունքով են իրականացվում: «Դեղագործություն» ՄԿԾ-ի շրջանակներում ուսանողները պատրաստում են պաստառներ «Դեղամիջոցներ»-ի վերաբերյալ, գրում են ռեֆերատներ և կուրսայիններ՝ «Փափուկ դեղաձևեր», «Դեղամիջոցների օգտագործման եղանակներ»: «Բուժական

կոսմետոլոգիայի» շրջանակներում ուսանողները ներկայացնում են ռեֆերատներ և կուրսային աշխատանքներ՝ «Մաշկի անատոմիա և հյուսվածքաբանություն», «Արյուն և արյունահոսություն» թեմաների շրջանակներում, իսկ «Քույրական գործ» ՄԿԾ-ում՝ «Հիվանդի հետազոտման եղանակներ», «Բնական աղետներ», «Բրուցելոզ», «Արյան խմբեր»: Աշխատանքներում առկա են եզրակացություն և գրականության ցանկ, սակայն վերլուծական բաղադրիչը հիմնականում բացակայում է:

Քոլեջի դասախոսական կազմը հետազոտություններ չի իրականացնում: Պետք է փաստել, որ վերլուծական, ստեղծագործական, հետազոտական բաղադրիչ պարունակող առաջադրանքները սակավ են:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջն» իր 2021-2026թթ. զարգացման ռազմավարական ծրագրում, որպես ռազմավարական առաջնահերթություն դիտարկվում է արդիական հետազոտությունների և նորարարությունների իրականացումը, որը կարող է նպաստել քոլեջի դիրքի ամրապնդմանը, ինչպես նաև տարածաշրջանի ունեցած մարտահրավերների լուծմանը: Հետազոտության ոլորտում առաջնահերթություններ սահմանելու Քոլեջի համար կարևոր է գնահատել Վարդենիս քաղաքի և մոտակա գյուղերի եղած կարիքները և մարտահրավերները, համայնքի ունեցած խնդիրների բացահայտումը զգալի ազդեցություն կունենա հետազոտական նպատակների սահմանման վրա: Առաջնահերթությունների բացահայտմանը զուգահեռ կարևոր է նաև գնահատել դասախոսական կազմի ունեցած փորձառությունը հետազոտության ոլորտում՝ անհրաժեշտության դեպքում զարգացնելով նաև նրանց հմտությունները:

Չնայած նրան, որ քոլեջը վերանայել է «Հետազոտական աշխատանքների պատրաստման և ներկայացման կանոնակարգ»-ը, այնուամենայնիվ այնտեղ հետազոտական աշխատանքներին (ռեֆերատ, կուրսային) համար սահմանված նկարագրությունը ոչ ամբողջությամբ է կիրառում գտել ներկայացված հետազոտական աշխատանքներում (հետազոտության նպատակ, խնդիր, մեթոդ, տվյալների հավաքագրում, արդյունքներ, եզրակացություն, գրականության ցանկ):

Միայն կարգի առկայությունը չի կարող ապահովել հաջողության գրանցում այն դեպքում, երբ դասախոսական և ուսանողական կազմերը լիարժեքորեն չեն պատկերացնում վերջինիս իրականացումը:

Հետազոտության զարգացման ոլորտում զգալի նշանակություն կարող են ունենալ նաև Քոլեջում աշխատող պրակտիկ բժիշկները՝ ապահովելով ուսանողների ընթացիկ ներկայությունը բժշկական հաստատություններում: Ուսանողները կարող են հետևել և ուսումնասիրել բուժքույրերի աշխատանքին, դուրս բերել աշխատանքի բարելավման ճանապարհներ և այլն:

Ուսանողների վերլուծաքննադատական մտածողությունը զարգացնելու նպատակով առավել նպատակահարմար կլինի, որ ուսանողներին առաջադրվեն մասնագիտական խնդիրներ, որոնք վերցված են իրական կյանքից:

Մտահոգիչ է, որ Քոլեջի հիմնական դասախոսական կազմը չի իրականացնում հետազոտություններ, չի ուսումնասիրում իրենց ոլորտի միջազգային փորձը, որը կնպաստեր

նաև ուսանողի հետազոտական լինելուն և դասախոսի մասնագիտական կարողությունների զարգացմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը չի սահմանել իր հետազոտական նպատակները, չի իրականացրել նախորդ հավատարմագրման արդյունքում տրամադրված խորհրդատվությունները, քոլեջում սակավ են հետազոտական բաղադրիչ պարունակող առաջադրանքները, դասախոսական կազմը չի իրականացնում հետազոտական աշխատանքներ, բացակայում է հետազոտություն-ուսումնառություն կապը, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի բավարարում 6-րդ չափանիշի պահանջները:

Եզրակացություն:Փորձագիտական խումբը «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 6-ի պահանջներին գնահատում է **անբավարար:**

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր : «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ»-ն ունի առանձին սեփական շինություն, որի ընդհանուր մակերեսը կազմում է 419մ², որտեղ իրականացվում է դասապրոցեսը ինչպես բուհի, այնպես էլ քոլեջի ուսանողների համար: Քոլեջի համար նախատեսված է 10 լսարան, 4 լսարանի համար վերջին տարիներին գնվել է գույք՝ սեղաներ և աթոռներ: Փորձագիտական այցի ընթացքում քոլեջում իրականացվում էին շինարարական աշխատանքներ, որի արդյունքում հաստատությունը կունենա ևս 2 նոր վերանորոգված և ժամանակակից սարքավորումներով հագեցած SMART լսարաններ, աշխատանքները գտնվում էին ավարտման փուլում:

2022թ. ՎԲՀՔ -ն Վարդենիս բժշկական կենտրոնի հետ համագործակցության արդյունքում կարողացել է ձեռք բերել նաև 1 լսարան Վարդենիս բժշկական կենտրոնում, լսարանն օգտագործվում է բժիշկ դասախոսների դասընթացները կազմակերպելու, գործնական ժամերը բժշկական կենտրոնում իրականացնելու համար:

Ուսումնական գործընթացները կազմակերպելու համար լսարաններում առկա են պաստառներ, նյութեր և պարագաներ (թուրմեր, փոշիներ), անատոմիական մուլյաժներ, «Քույրական գործ» մոդուլի համար նախատեսված պարագաներ և մուլյաժներ, վիրաբուժական գործիքների լրակազմ: Վերջին ժամանակահատվածում քոլեջը «Բուժական կոսմետոլոգիա» ՄԿԾ-ի իրականացման համար ձեռք է բերել համապատասխան կոսմետոլոգիական պառկաթոռ, մատնահարդարման սեղան, սարքավորումներ և նյութեր՝ մատնահարդարման, դիմահարդարման և դեմքի խնամքի: Որպես այդպիին քոլեջում առկա չեն լաբորատորիաներ (քիմիա, ֆիզիկա և այլն), ինչպես նաև սիմուլացիոն կաբինետներ: Դեղագործություն ՄԿԾ-ի շրջանակներում ուսանողները հեղուկ դեղաձևեր, դեղափոշիներ պատրաստում են լսարանային պայմաններում: Հարկ է նշել, որ որոշ մոդուլների դասավանդման համար առկա չեն նաև որոշ սարքեր, պարագաներ (բեկակալներ, տիկնիկներ

և այլն)։ Ռեսուրսային բազայի բացը լրացնելու նպատակով Քոլեջը համագործակցում է Վարդենիսի ԲԿ-ի, Գեղարքունիքի կայազորային հոսպիտալի, դեղատների, գեղեցկության սրահների հետ։ Ուսանողները գործնական կարողություններ հիմնականում ձեռք են բերում գործատուների մոտ։

Քոլեջի շենքն ունի ջեռուցման համակարգ (գազի կաթսա)։ ՎԲՀՔ-ում գործում է վերանորոգված և կահավորված ուսանողական սրճարան, որը բացվել է ուսանողների կարիքներից ելնելով, վերջինիս առկայությունը քոլեջի տարածքն ուսանողների համար դարձրել է առավել գրավիչ։

ՎԲՀՔ-ում ուանողների համար առանձնացված համակարգչային լսարան որպես այդպիսին առկա չէ։ Քոլեջի ուսումնական և ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի ջանքերով «ՎԻՎԱ-ՄՏՍ» Հայաստան ՓԲԸ-ն Քոլեջին նվիրել է 5 համակարգիչ, որոնք գտնվում են դասախոսական կազմի սենյակում, այդ համակարգիչներից օգտվում են ինչպես դասախոսները, այնպես էլ ուսանողները, միևնույն ժամանակ այնտեղ կազմակերպվում են «Համակարգչային օպերատորություն» մոդուլի դասերը։ Քոլեջում հասանելի է Wi-Fi ծածկույթ։ Ֆիզկուլտուրա առարկան իրականացնելու համար ՄՈՒՀ-ը Վարդենիս քաղաքում վարձակալել է մարզադահլիճ - 243մ^2։

Անվտանգության պահպանման նպատակով շենքի պատերին փակցված են տարհանման պլաններ, առկա են կրակմարիչներ։ Տարածքը նաև տեսաձայնագրվում է։ Քոլեջում առանձնացված բուժկետ չկա, առկա է առաջին օգնության պայուսակ համապատասխան դեղորայքով և պարագաներով։ Անհրաժեշտության պարագայում քոլեջի ուսանողները և դասախոսները կարող են աջակցություն ստանալ բժիշկ դասախոսների կողմից։

Քոլեջի շենքը հարմարեցված չէ հատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար, նման կարիքներով ուսանողներ այս պահին քոլեջը չունի։

ՎԲՀՔ-ում փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի գործավարության, տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման համակարգի» կարգի համաձայն, որում սահմանվում է փաստաթղթերի շարժը։ Փաստաթղթաշրջանառությունը Քոլեջում հիմնականում իրականացվում է թղթային տարբերակով, էլեկտրոնային փոստերի և վայրերի միջոցով։ Քոլեջի վերաբերյալ հիմնական ռազամավարական նշանակություն ունեցող փաստաթղթերը հրապարակված են նաև քոլեջի պաշտոնական կայքէջում։

«Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ»-ն ունի գրադարան, որտեղ առկա է 1934 անուն գիրք, որից մասնագիտական գրականությանը բաժին է ընկնում 92-ը, 2021-2022թթ. Քոլեջի գրադարանը նվիրատվության շնորհիվ համալրվել է նոր գրքերով, որից 6 անունը մասնագիտական գրականություն է (Քույրական գործը վիրաբուժությունում ձեռնարկ, Քույրական գործը վիրաբուժությունում դասագիրք I,II,III մասեր, Առաջին օգնություն, Medical Biology և այլն)։ ՄՈՒՀ-ն ունի նաև էլեկտրոնային գրադարան, որը տեղադրված է պաշտոնական կայքէջում (mhcv.am), որտեղ հասանելի է 35 անուն մասնագիտական գրականություն։ Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ուսանողներն ու դասախոսներն առավելապես օգտվում է էլետրոնային գրադարանից։ Ռեսուրսային ապահովվածությունից ուսանողների և դասախոսների բավարարվածությունը գնահատելու համար քոլեջն իրականացնում է հարցումներ, շահակիցները հիմնականում գոհ են եղել առկա

ռեսուրսներից՝ հայտնելով ցանկություն նաև ունենալու SMART լսարան և լաբորատորիա: Ինչպես արդեն նշվեց, SMART 2 լսարանների կառուցումը մոտենում է իր ավարտին:

Քոլեջի ֆինանսական մուտքերի հիմնական աղբյուրը ուսանողների վարձավճարներն են, իսկ մնացյալը՝ բարեգործական ներդրումները: Համաձայն 2023թ.տվյալների՝ նախորդ տարիների համեմատ քոլեջի մուտքերն աճել են ՝ պայմանավորված ուսանողների քանակի ավելացմամբ: Ծախսերի տեսանկյունից քոլեջի համար առաջնահերթություն են աշխատավարձերը, կոմունալ վճարումները, գույքի ձեռքբերումը և շենքային պայմանների բարեկարգումը:

Ուսանողների և դասախոսական կազմի ռեսուրսային ապահովվածությունը գնահատելու նպատակով քոլեջն իրականացնում է հարցումներ, ըստ վերլուծությունների, վերջիններս հիմնականում գոհ են ռեսուրսային բազայից:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում քոլեջի քայլերը ուսումնական միջավայրի բարելավման ուղղությամբ՝ կարևորելով ռեսուրսային բազայի ընդլայման գործընթացը: Վերջին երկու տարիներին քոլեջը ջանքեր է գործադրել շենքային պայմանների բարելավման ուղղությամբ, որը նպաստել է քոլեջի գրավչության բարձրացմանը ուսանողների շրջանում: Դրական է, որ ՎԲՀՔ-ն իր մասնագիտական ռեսուրսային բազայի ոչ լիարժեք լինելը կարողանում է լրացնել բժշկական կենտրոնների օգնությամբ, որն ապահովում է ուսանողների մասնագիտական կարողությունների զարգացումը: Ուսանողների քանակի մեծացման հետ կապված Քոլեջն ապագայում կարիք կունենա ձեռքբերելու մուլյաժներ, սարքավորումներ, որոնք հնարավորություն կտան ուսումնական գործընթացը կազմակերպել առավել արդյունավետ: Վերջինիս ձեռքբերումը հնարավոր կարող է դառնալ այլընտրանքային ֆինանսական աղբյուրների հայթայթման շնորհիվ: Հաշվի առնելով այն, որ Բուժական կոսմետոլոգիա ՄԿԾ-ի իրականացման համար քոլեջն արդեն իսկ հասցրել է ձեռք բերել համապատասխան սարքավորումներ, ներկայումս քոլեջի ամենածախսատար մասնագիտությունը դիտարկվում է «Քույրական գործ» ՄԿԾ-ն:

Դրական է, որ քոլեջի ուսանողական միջավայրը բարելավելու համար ՎԲՀՔ-ն ձեռնամուխ է եղել ուսանողական սրճարանի բացմանը, որը որոշակիորեն մոտիվացրել է ուսանողներին իրենց ժամանցը կազմակերպելու համար:

Դրական է, որ քոլեջը գրադարանային հագեցվածությունն ապահովելու համար ներդրել է էլեկտրոնային գրադարան, վերջինս նպաստում է ֆինանսական միջոցների խնայողությանը և ուսանողներին համապատասխան մասնագիտական գրականությամբ ապահովմանը: Փորձագիտական խումբը խրախուսում է էլեկտրոնային գրադարանի հարստացումը ոչ միայն հայալեզու, այնպես էլ օտարալեզու գրականությամբ, որը կնպաստի նաև ուսանողների մասնագիտական օտար լեզվի իմացության կարողության զարգացմանը:

Քոլեջի ներքին փաստաթղթաշրջանառությունը ներկայումս առավելապես իրականացվում է թղթային տարբերակով, աշխատակիցների ոչ մեծ քանակը դեռևս խոչընդոտներ չեն ստեղծում փաստաթղթերի հասանելիության տեսանկյունից:

Փորձագիտական խմբի կողմից դրական է գնահատվում քոլեջում անվտանգ միջավայրի և ուսանողների առողջության պահպանմանը ուղղված գործընթացները, այնուամենայնիվ փորձագիտական խումբը կարևորում է նաև առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող ուսանողների համար մինիմալ պայմանների ապահովումը, օրինակ՝ թեքահարթակի կառուցումը, որն իրենից ֆինանսական մեծ ծախսեր չի ենթադրում,

սակայն այն հնարավորություն կընձեռի հենաշարժողական խնդիրներ ունեցող ուսանողների կրթական գործընթացներ կազմակերպել շենքի առաջին հարկում:

Դրական է, որ ուսանողների և դասախոսների բավարարվածությունը ռեսուրսային կարիքներից գնահատվում է հարցումների միջոցով, որը նպաստում է քոլեջի առաջնահերթությունների սահմանմանը և ռեսուրսային բազայի ուղղորդված բարելավմանը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջը նախորդ հավատարմագրման գործընթացից հետո ակտիվ քայլեր է ձեռնարկել իր ռեսուրսային բազան համալրելու և բարեկարգելու ուղղությամբ, Բուժական կոսմետոլոգիա ՄԿԾ-ի համար ձեռք է բերել համապատասխան սարքավորումներ և պարագաներ, հիմնում է նոր SMART լսարաններ, ունի ռեսուրսների ձեռքբերման առաջնահերթություններ, ձեռնամուխ է եղել ուսանողական սրճարանի բացմանը, որոշ ՄԿԾ-ների ռեսուրսային բացը լրացնում է գործատու կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով, փորձագիտական խումբը գտնում է, որ քոելեջը բավարարում է չափանիշ 7-ի պահանջները:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 7-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր: Համաձայն ինքնավերլուծության՝ ՎԲՀՔ-ի հաշվետվողականության գործընթացը կանոնակարգվում է «Միջին մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքով, կանոնադրությամբ: ՎԲՀՔ-ն ընթացիկ հաշվետվություններ է տրամադրում ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը, Պետեկամուտների կոմիտեին և այլ գերատեսչությունների:

Նախորդ հավատարմագրման գործընթացի արդյունքում փորձագիական խումբը տրամադրել էր խորհրդատվություն հաշվետվությունները դարձնել վերլուծական և ապահովել կապ ռազմավարական նպատակների և խնդիրների հետ: Անհրաժեշտ է նշել, որ 2022 թվականից քոլեջի բոլոր ստորաբաժանումները ներկայացնում են հաշվետվություններ՝ ըստ ռազմավարական նպատակների: Մշակվել է հաշվետվության նոր ձևաչափ որդեգրած սկզբունքին համապատասխան: Ամբիոնի վարիչները, ստորաբաժանումները (կարիերայի ու պրակտիկայի, որակի ապահովման, կադրեի պատասխանատու) հաշվետու են տնօրենին, իսկ տնօրենը՝ տնօրենական խորհրդին: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՎԲՀՔ-ի պաշտոնական կայքէջը թարմացման փուլում է, և քոլեջը պլանավորում է հաշվետվությունները ապագայում հրապարակել:

ՄՈՒՀ-ն իր ընթացակարգերի թափանցիկությունն ապահովում է պաշտոնական հայալեզու կայքէջի միջոցով (mhcv.am), հրապարակված են քոլեջի ռազմավարական նշանակություն ունեցող փաստաթղթերը, կառնակարգերը և ընթացակարգերը,

գործատուների և այլ գործընկերների հետ ունեցած պայմանագրերը: Կայքէջում հրապարակվում է նաև տեղեկավություն ՎԲՀՔ-ում իրականացվող կրթական ծրագրերի, առկա աշխատանքի թափուր տեղերի և իրականացվող ընթացիկ միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաև տարածվում է տեղեկատվություն գործատուների մոտ եղած աշխատանքի այն թափուր տեղերի վերաբերյալ, որոնք ոլորտային առնչվում են քոլեջում իրականացվող ՄԿԾ-ներին:

ՄՈՒՀ-ն ունի նաև ֆեյսբուքյան էջ: Էջով տարածվում է տեղեկատվություն ընդունելության մանրամասների, բաց դասերի, թափուր աշխատատեղերի, ուսանողների և վարչական անձնակազմի հետ հանդիպումների և այլ գործընթացների վերաբերյալ:

Նախորդ հավատարմագրման փորձագիտական խումբը ՄՈՒՀ-ին տրամադրել էր խորհրդատվություն գործարկել կայքէջը՝ ստեղծելով տեղեկատվության համապատասխան բաժիններ և հետադարձ կապի մեխանիզմներ: 2021թվականից քոլեջում ներդրվել է ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի քաղաքականությունը: Հետադարձ կապի մեխանիզմներն են՝ ֆեյսբուքյան էջի զրուցարանը, պաշտոնական կայքէջում տեղադրված հաճախ տրամադրվող հարցեր բաժինը, քոլեջի պաշտոնական էլեկտրոնային հասցեն (medhumcollege@gmail.com), հեռախոսահամարները, անհրաժեշտ է նշել, որ քոլեջն արտաքին շահակիցների ընթացիկ հարցերին և էլեկտրոնային փաստին եկող նամակներին արձագանքում է արագորեն:

Նախորդ փորձագիտական խումբը քոլեջին տրամադրել էր խորհրդատվություն ներդնելու հասարակությանը մատուցվող ծառայությունների կայուն համակարգ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ ՎԲՀՔ-ում հասարակությանն արժեքների փոխանցման մեխանիզմներ դեռևս ներդրված չեն: Քոլեջը պլանավորում է իր շրջանավարտների համար, որոնք դեռ չեն գտել աշխատանք, կազմակերպել կարճաժամկետ վճարովի վերապատրաստումներ:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ նախորդ հավատարմագրման խորհրդատվության արդյունքում քոլեջի ստորաբաժանումներն իրենց հաշվետվությունները ներկայացնում են ռազմավարական նպատակներին համապատասխան, վերջինս կնպաստի ռազմավարական նպատակների գնահատմանը:

Նախորդ հավատարմագրման արդյունքում քոլեջը ներդրել է իր պաշտոնական կայքէջը, որը նպաստում է ՄՈՒՀ-ում իրականացվող գործընթացների թափանցիկության ապահովմանը: Գովելի է, որ քոլեջը հրապարակում է նաև գործատուների մոտ եղած թափուր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվություն, փորձագիտական խումբը խրախուսում է այսպիսի գործելաոճը և գտնում, որ այդպիսի հայտարարությունների տեղադրման համար կայքէջում կարող է հատկացվել առանձին բաժին, որտեղ ներկայացված կլինեն շրջանավարտներին և ուսանողներին ներկայացվող բոլոր առաջարկները: Այսպիսի քաքականությունը կնպաստի շրջանավարտների զբաղվածության տվյալների ավելացմանը:

Խումբը նշում է, որ կայքէջի վեամշակման գործընթացում հաշվի առնի նաև օտարալեզու /անգլերեն, ռուսերեն/ հատվածների ապահովմանը և օտարալեզու տեղեկատվության տրամադրմանը, վերջինս կնպաստի քոլեջի թափանցիկության ապահովմանը նաև օտարազգի շահակիցների համար:

Հաշվի առնելով քոլեջի ռազմավարական նշանակությունը տարածաշրջանում՝ փորձագիտական խումբը նշում է, որ քոլեջը՝ որպես նաև բժշկական ուղղվածություն ունեցող

ուսումնական հաստատություն, կարող է դպրոցահասակ երեխաների և հասարակության այլ շերտերի շրջանում իրականացնել առաջին բուժօգնության դասընթացներ՝ բարձրացնելով բժշկական գիտելիքները հասարակության շրջանում: Վերջինս կնպաստի հասարակության շրջանում քոլեջի վարկանիշի առավել բարձրացմանը՝ որպես սոցիալական պատասխանատվություն կրող կառույցի:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ նախորդ հավատարմագրումից հետո հաշվետվողականության ձևաչափերն ամբողջովին վերնայվել և համապատասխանեցվել են ռազմավարական նպատակներին, ստորաբաժանումների համար ստողծվել է հաշվետվողականության միասնական ձևաչափ, գործարկվել է պաշտոնական կայքէջը, առկա են հետադարձ կապի ապահովման մեխանիզմներ գործատուների, շրջանավարտների և ներքին շահակիցների հետ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը բավարարում է 8-րդ չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը ՎԲՀՔ-ի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը ՉԱՓԱՆԻՇ 8-ի պահանջներին գնահատում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր: Արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացների զարգացումը ՎԲՀՔ-ի ռազմավարական առաջնահերթություններից է: Քոլեջն իր առջև խնդիր է դրել ունենալու արտաքին կապերի և միջազգայնացման հարցերով զբաղվող ստորաբաժանում, ներկայումս այդ գործընթացներն իրականացվում են ուսումնական աշխատանքների գծով տնօրեն տեղակալի, Կարիերայի և պրակտիկայի պատասխանատուի կողմից: Կարիերայի և պրակտիկայի պատասխանատուն հիմնականում զբաղվում է նոր գործատուների որոնման և ներգրավման հարցերով, իսկ տնօրենի տեղակալը այլ գործընկերների՝ բուհերի, քոլեջների, միջազգային գործընկերների ձեռքբերման և կապերի հաստատման աշխատանքներով: Վերջին ժամանակահատվածում քոլեջը կնքել է համագործակցության մի շարք հուշագրեր և պայմանագրեր միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (Մարտունու պետական բժշկական քոլեջ, Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ, Գրիգորիսի բժշկահումանիտար քոլեջ, Պրովիզորի Լ. Սարգսյանի անվան բժշկական քոլեջ) հետ, այս տեսանկյունից քոլեջը թիրախավորել է առավելապես մասնավոր ուսումնական հաստատությունների հետ համագործակցությունը: Համագործակցության արդյունքում տեղի է ունեցել նաև Քույրական գործ ՄԿԾ-ի ուսումնական պլանների բենչմարքինգ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ «Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ»-ի հետ համագործակցության պայմանագրի շրջանակում կազմակերպվել է նաև բաց դաս, որին մասնակցել է «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ»-ի ՈՒԽ աղամները, դասին

մուլյաժների կիրառմամբ իրականացվել է կոտրվածքների անշարժեցում, ներարկումներ, սիրտ թոքային վերակենդանացում:

ՄՈՒՀ-ն ունի պայմանագրեր նաև Վարդենիսի նյարդահոգեբանական տուն ինտերնատի, Վարդենիսի պոլիկլինիկայի, և ՀՀ ՊՆ կայազորային հոսպիտալի, Վարդենիսի ԲԿ-ի և մի շարք դեղատների (Արաքսյա Դավթյան դեղատուն, Ռուբեն Հակոբյան դեղատուն և այլն) և գեղեցկության սրահների (Բյութի Մերի կասմետոլոգիայի սրահ, Աիդա Երանոսյան ԱՁ կասմետոլոգիայի սրահ) հետ, համագործակցության արդյունքում քոլեջը կազմակերպում է ուսանողների պրակտիկաները (երբեմն նաև գործնական դասերը), ներգրավում է ոլորտի պրակտիկ դասախոսների: Վարդենիսի ԲԿ-ի հետ համագործակցության արդյունքում քոլեջը կարողացել է ձեռք բերել նաև մեկ լսարան ԲԿ-ի ներսում, որտեղ իրականացվում են բժիշկ դասախոսների դասերը: Ուսանողների ներգրավման նպատակով քոլեջը համագործակցում է նաև տեղի դպրոցների հետ:

Գործատուների հետ կնքված որոշ պայմանագրերում որպես համագործակցության կարևոր կետ նշվում է, որ գործատուն թափուր տեղ ունենալու դեպքում տեղեկացնելու է քոլեջին՝ շրջանավարտներին և ուսանողներին տեղեկատվություն տրամադրելու նպատակով: Փորձագիտական խումբը նշում է, որ թե ուսումնական հաստատությունը, թե գործատուները կարևորում են թափուր աշխատատեղերի տեղեկատվության տարածումը:

Քոլեջն ունի պայամնագրեր նաև տուրիստական կազմակերպությունների և ռեստորանների, Հայ փոստի հետ, որը հետագայում հիմք է հանդիսանալու «Սպասարկման կազմակերպում» ՄԿԾ-ի պրակտիկաների կազմակերպաման համար:

ՄՈՒՀ-ն ունի նաև հուշագրեր Ավանդական բժշկության համալսարանի հետ ուսանողների կրթության հետագա շարունակման հնարավորության ստեղծման նպատակով, անհրաժեշտ է նշել, որ առայժմ նման դեպքեր չեն եղել:

Միջազգայնացման գործընթացների խթանման նպատակով ՎԲՀՔ-ն կնքել է հուշագիր Էստոնիայի Վալգամայի միջին մասնագիտական ուսումնական կենտրոնի (Vocatuinal education centre of Valgamaa) հետ, որի նպատակն է եղել ապահովել ուսանողների և դասախոսների շարժունությունը, գիտական գրականության փոխնակումը, բենչմարքինգի իրականացումը: Պայմանագրի շրջանակում տեղի են ունեցել հանդիպումներ, և ձեռք են բերվել բանավոր համաձայնություններ: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ այդ համաձայնությունները դեռևս թղթային տարբերակով են, իսկ ուսանողական համակազմը մոտիվացված չէ դիմելու առաջարկվող միջազգային ծրագրին՝ պայմանավորված լեզվի իմացության ցածր մակարդակով և շարժունության փորձի բացակայությամբ:

Ըստ ինքնավերլուծության՝ դասավանդողների մոտ 94%-ը, իսկ ուսանողների 66%-ը տիրապետում են օտարալեզուների (անգլերեն կամ ռուսերեն): Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ աշխատակիցների լեզվական մակարդակի վերաբերյալ տվյալները հավաքագրվել են ՈԱ պատասխանատուի կողմից անցկացված հարցման միջով, լեզվի մակարդակի գնահատման այլ միջոցներ, օրինակ՝ թեստեր, չեն կիրառվել: Ուսանողների լեզվի իմացությունը որոշվել է անգլերեն և ռուսերեն առարկաների շրջանակներում նրանց ստացած գնահատականների տվյալների հիման վրա: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ Քոլեջի ղեկավարությունը պլանավորում է դասախոսների և ուսանողների համար դասընթացներ անգլերեն լեզվի խոսակցական մակարդակը բարձրացնելու նպատակով: Անհրաժեշտ է նշել, որ ՄՈՒՀ-ն իր ՌԾ-ում որպես ցուցիչ սահմանել է, որ մինչ 2026թ. ունենալու է որակյալ դասախոսական կազմ օտար լեզվի իմացությամբ(50-60%):

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացները քոլեջի ռազմավարական առաջնահերթություններից է, որի շրջանակներում ՎԲՀՔ-ն քայլեր է ձեռնարկել նոր գործընկերների որոնման և ձեռքբերման ուղղությամբ: Վերջին երկու տարիներին քոլեջը կազմակերպել է փոխադարձ այցեր, կնքել հուշագրեր և պայմանագրեր նմանատիպ կրթություն մատուցող այլ ուսումնական հաստատությունների հետ, ինչպես նաև ակտիվ համագործակել տեղական գործընկերների, գործատուների, հիվանդանոցի, պոլիկլինիկայի, դպրոցների հետ: Փորձագիտական խումբը դրական է գնահատում այն, որ վերոնշյալ պայմանագրերում առկա է կետ, համաձայն որի գործատուն թափուր հաստիքի դեպքում դիմում է քոլեջին, վերջինս նպաստում է ուսանողների և շրջանավարտների շուկայում իրացմանը և գործատուների կողմից որակյալ կադրերի ձեռքբերմանը: Այսպիսի համագործակցությունները փոխշահավետ են ինչպես ուսումնական հաստատության, այնպես էլ գործատուների համար:

ՎԲՀՔ-ն ակտիվություն է դրսևորում նաև մասնավոր ուսումնական հաստատությունների հետ համագործակցության շրջանակներում, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը կարող է նախաձեռնել մասնավոր միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ասոցիացիայի բացմանը, որը կնպաստի հաստատությունների միջև կապերի սերտացմանը, տարբեր նախագծերի միասնական իրականացմանը, ինչպես նաև հավելյալ եկամուտների ձեռքբերմանը:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ քոլեջը քայլեր է ձեռնարկել արտասահմանյան միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների հետ կապ հաստատելու և համագործակցության եզրեր գտնելու համար, այնուամենայնիվ առավել խորքային գործընթացներ սկսելու համար քոլեջն անհրաժեշտություն ունի քայլ առ քայլ նախապատրաստելու ինչպես դասախոսական կազմին, այնպես էլ՝ ուսանողներին: Առաջին հերթին կարևորվում է լեզվի իմացությունը, ՄՈՒՀ-ն անհրաժեշտություն ունի առավել վստահելի մեխանիզմներով գնահատելու թե դասախոսական, և թե ուսանողական համակազմերի օտար լեզվի իմացության կարողությունները, որը կնպաստի ինչպես ՌԾ-ում հստակ և հավաստի ցուցիչների սահմանմանը (ՌԾ-ում սահմանված է 50-60% լեզվի իմացության ապահովում, ԻՎ-ում նշված է, 66-94%-ն արդեն իսկ տիրապետում են), այնպես էլ շուկայի ճիշտ թիրախավորմանը (ռուսալեզու, անգլալեզու): Փորձագիտական խումբը ողջունում է քոլեջի նախաձեռնությունը օտար լեզվի դասընթացներ կազմակերպելու հարցում:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ քոլեջում արտաքին կապերի և միջազգայնացման գործընթացներն առաջնահերթություններ են, առկա են ոլորտն առաջ տանող պատասխանատուներ, վերջին տարիների ակտիվացել է գործընկեր կազմակերպությունների և գործատուների հետ համագործակցությունը, որոնց միջոցով ՄՈՒՀ-ը կարողանում լրացնել իր ռեսուրսային բազայի ոչ ամբողջական հագեցվածությունը, ձեռք է բերում պրակտիկ մասնագետներ, քոլեջը փորձեր է իրականացրել միջազգային գործընկերներ գտնելու և համագործակցության շրջանակ ստեղծելու ուղղությամբ, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը ավելի շուտ համապատասխանում է 9-րդ չափանիշի պահանջներին և գնահատվում է բավարար:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 9-ի պահանջներին գնահատում է **բավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր: ՎԲՀՔ-ում որակի ապահովման գործընթացները դիտարկվում են ռազմավարական առաջնահերթություն: Նախորդ ինստիտուցիոնալ հավատարմագրման արդյունքում քոլեջը ստացել 5 խորհրդատվություն, որոնք հետագայում դարձել են ՌԾ խնդիրներ, դրանք են՝

- վերանայել քոլեջի որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը, կիրառվող մեխանիզմները և գործիքները,
- ակտիվացնել փոխգործակցությունը ՄՈՒՀ-ի որակի ապահովման պատասխանատուի և այլ ստորաբաժանումների միջև՝ իրականացնելով լավագույն փորձի հայտնաբերում և տարածում,
- Որակի ապահովման գործընթացներում ներգրավել ներքին և արտաքին շահակիցներին՝ պասիվ մասնակցությունից անցնելով գործընկերային ներգրավվածության,
- Ստեղծել որակի պահահովման տվյալների հավաքագրման հստակ մեխանիզմներ և այդ մեխանիզմների կիրառման արդյունքում ստացած հավաստի տվյալների հիման վրա իրականացնել բովանդակային վերլուծություններ՝ ուղղված ՄԿԾ-ների և այլ գործընթացների բարելավմանը,
- Ներդնել որակի ապահովման գործընթացների վերաբերյալ թափանցիկություն և հրապարակայնություն ապահովող հուսալի մեխանիզմներ ներքին և արտաքին շահակիցների համար:

Որակի ապահովման գործընթացներն իրականացնելու նպատակով քոլեջը 2022թ. մշակել և ներդրվել է որակի ներքին ապահովման քաղաքականությունը, հաստատել է որակի պահավման ձեռնարկը: Փորձագիտական այցից պարզ դարձավ, ձեռնարկը դեռևս չի գործում, քանի որ այն լիովին հարմարեցված չէ քոլեջում իրականացվող գործընթացներին: ՈԱ աշխատանքները համակարգելու նպատակով մշակվել է նաև ՈԱ պատասխանատուի պաշտոնի նկարագիրը, որտեղ սահմանված են աշխատակցի գործառույթները: 2018թ.-ից ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման պասասխանատու, վերջինս 2018թ. 5-օրյա վերապատրաստում է անցել «Որակի ապահովման համակարգի մշակում, ներդնում և բարելավում» թեմայով:

ՈԱ պատասխանատուն կանոնակարգում է ոլորտի աշխատանքները երկրաժամկետ պլան-ժամանակացույցի (2021-2026) համաձայն: Ըստ պլանի՝ սահմանված է 21 գործողություն, որից որոշներն իրականացվել են, որոշների ժամկետն էլ արդեն լրացել է, սակայն արդյունքներ դեռևս առկա չեն (վերանայել ՄՈՒՀ-ի քաղաքականության և ընթացակարգերի վարչարարությունը՝ ներդնելով որակի կառավարման ՊԻՄԲ սկզբունքը բոլոր գործնթացներում, մշակել շահակիցների տեղեկացվածության գնահատման մեխանիզմներ, ներդնել առաքելությանը ու նպատակների իրականացման արդյունքների գնահատմանն ու բարելավմանն ուղղված մեխանիզմներ և ընթացակարգեր 2022-2023 ուստարում): Անհրաժեշտ է նշել, որ ՊԻԳԲ շրջափուլը քոլեջում լիովին ներդրված չէ, վերջինս պայմանավորված գնահատման գործիքակազմերի անկատարությամբ, վերջիններս գրավոր շարադրված են, սակայն չեն կիրառվում: Բարելավման գործընթացների շրջանակներում տեղի են ունենում բանավոր քննարկումներ՝ արդյունքում հաճախ իրենց հիմքում չունենալով վերլուծված տվյալներ: Որակի ապահովման համակարգի չկայացվածության մեկ այլ խնդիր է եղել նաև ՈԱ պատասխանտուի ժամանակավոր բացակայությունը ֆիզարձակուրդով պայմանավորված (2020-2022թթ.), այդ ընթացքում որոշ աշխատանքներ իրականացվել են ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի կողմից:

Քոլեջում ՈԱ պատասխանատուն որակի ապահովման աշխատանքները կազմակերպվում է դասախոսական սենյակում, վերջինս այնտեղ ունի համակարգիչ և իրեն անհրաժեշտ նյութական ռեսուրսներ: Քոլեջի բյուջեում որակի ապահովման աշխատանքների համար նախատեսված են ֆինանսական միջոցներ, վերջինս ուղղվում է ընթացիկ աշխատանքային նյութերի ձեռքբերմանը (թղթեր հարցումների կազմակերպման համար և այլն): Ըստ կազմակերպական կառուցվածքի ՈԱ պատասխանատուն հաշվետու է տնօրենին:

Ներքին շահակիցների ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացում սահմանված է ՈԱ ընթացակարգերում, որի հիմնական մեխանիզմը հարցումների իրականացումն է: Հարկ է նշել, որ հարցումները չեն կազմակերպվում պարբերական ձևով, ինչպես նաև բացակայում են հարցումների կազմակերպման և անցկացման, տվյալների հավաքագրման և մշակման արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմները: Հարցաշարերում տեղ գտած հարցերը կազմված չեն հստակ մեթոդաբանությամբ, օրինակ՝ գնահատում են որակը, թե որքանո՞վ են բավարարված, սակայն հստակ չէ ինչ ինկատի ունեն: Հարցումները իրականացվում են ուսանողների, շրջանավարտների շրջանում՝ գնահատվել է քոլեջում ստացած տեսական գիտելիքների, հմտությունների, զբաղվածության, ռեսուրսների բավարարվածության աստիճանը՝ լսարանները, ճաշարանը, ջեռուցումը, սանիտարական պայմանները: Փորձագիտական այցից պարզ դարձավ, որ հարցումները բերել են միայն ռեսուրսային բազայի բարելավմանը:

Ներքին և արտաքին շահակիցների կարիքների վերհանման նպատակով քոլեջը կազմակերպում է նաև բանավոր քննարկու ասնակցության աստիճանը որակի ապահովման գործընթացներում և դրանց արդյունավետությունը: Որակի ապահովման համակարգում արտաքին շահակիցների ընգրկվածությունը սահմանափակվում է որոշ հանդիպումներով և պետական ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում ընդգրկվածութամբ, նմանատիպ քննարկումները չեն բացահայտում խորքային խնդիրները և նախանշում լուծման ուղիները:

Որակի ապահովման ներքին համակարգի թափանցիկությունն ապահովող կարևորագույն մեխանիզմներից է ՎԲՀՔ-ի պաշտոնական կայքէջը, անհրաժեշտ է նշել, կայքէջում տեղադրված են միայն «Քոլեջում ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ շրջանավարտների հարցման կանոնակարգը» և «Շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության կանոնակարգը»: Իրականացված ինքնավերլուծությունները հասանելի չեն պաշտոնական կայքէջում:

Ինչ վերաբերում է հավաստի տվյալների ապահովմանն արտաքին գնահատման համար, անհրաժեշտ է նշել, ինքնավերլուծությունում եղած տվյալները երբմն եղել են ոչ այդքան հավաստի, օրինակ՝ ուսանողական և դասախոսական կազմերի օտար լեզուների տիրապետման ցուցանիշները:

Լավագույն փորձը ուսումասիրված չէ: Քոլեջը որակի ապահովման գործընթացների ձևավորման փուլում է:

Դատողություններ: Փորձագիտական խումբը դրական է համարում, որ քոլեջը որակի ապահովման գործընթացներն իրականացնելու համար մշակել է համապատասխան փաստաթղթային հենք, այնուամենայնիվ միևնույն ժամանակ որոշ փաստաթղթեր, օրինակ՝ ՈԱ ձեռնարկը, վերանայման և քոլեջի կարիքներին և առանձնահատկություններին հարմարեցնելու կարիք ունեն:

Խումբը կարևորում է, որպեսզի թե ներքին, և թե արտաքին շահակիցները լիովին մասնակցեն որակի ապահովման գործընթացներին, վերջինս կնպաստի շահակիցների դերերի առավել բարձրացմանը, նրանց կողմից քոլեջի ունեցած արդյունքների նկատմամբ պատասխանատվության կիսմանը: Անհրաժեշտ է նշել, որ անհրաժեշտ է հստակորեն սահմանել արտաքին և ներքին շահակիցների դերերն ու պարտականությունները որակի ապահովման գործընթացներում:

Որակի ապահովման պատասխանատուի կողմից իրականացվում են մի շարք հարցումներ ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և այլ շահակիցների շրջանում, այնուամենայնիվ միշտ չէ, որ հարցաշարերը խնդիր վերհանող են և դրանց հիման վրա հնարավոր է լինում ստանալ օբյեկտիվ տեղեկավություն, և արդարացված որոշումներ կայացնել: Վերջիններս բարելավման և զարգացման կարիք ունեն, անհրաժեշտ է նախ և առաջ թիրախավորել, թե ինչպիսի տվյալների կարիք ունի հաստատությունը (կառավարման մարմինները, ղեկավարները, դասախոսները և այլն), այնուհետև նոր կենտրոնանալ հարցաշարերի և դրանցում տեղ գտնող հարցերի կազզման վրա: Նախքան հարցաշարեն ամբողջական կիրառման մեջ դնելը անհրաժեշտություն կլինի նաև դրանք փորձարկել՝ հասկանալու արդյունավետությունը: Բացի այդ, որպեսզի տվյալները լինեն առավել վստահելի, ՄՈՒՀ-ը կարող է կիրառել զուգահեռաբար նաև այլ մեխանիզմներ:

Որակի ապահովման գործընթացները դեռևս քոլեջի ակադեմիական հանրույթի համար քննարկման հիմնական առարկա չեն դարձել, բացի այդ ՄՈՒՀ-ի պաշտոնական կայքէջում առկա չէ լիարժեք տեղեկատվություն որակի ապահովման գործընթացների վերաբերյալ, վերջիններս խոչընդոտում են որակի մշակույթի ձևավորմանը և գործընթացների թափանցիկության ապահովմանը: Փորձագիտական խումբը դրական է գնահատում Քոլեջի ղեկավար կազմի աջակցությունը ուղղված որակի ապահովման համակարգի ձևավորմանը՝ միևնույն ժամանակ մտահոգիչ համարելով Քոլեջի ստորաբաժանումների որակի

ապահովման համակարգի վերաբերյալ միասնական պատկերացումների բացակայությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՈԱ գործընթացները համակարգող փաստաթղթերը լիարժեք կիրառություն չեն գտել, շահակիցների կարիքների վերհանող մեխանիզմները խնդիր բացահայտող չեն, հարցաշարերը կարիք ունեն վերանայման, ՊԻԳԲ շրջափուլը լիարժեք չի գործում, որակի մշակույթը տարածված չէ, ՈԱ գործընթացները չեն հրապարակվում և տարածվում, փորձագիտական խումբը գտնում է, որ քոլեջը չի համապատասխանում 10-րդ չափանիշի պահանջներին և գնահատվում է անբավարար:

Եզրակացություն: Փորձագիտական խումբը «Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշ 10-ի պահանջներին գնահատում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	*ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ*
1. Առաքելություն և նպատակներ	Բավարարում է
2. Կառավարում ու վարչարարություն	Չի բավարարում
3.Մասնագիտության կրթական ծրագրեր	Բավարարում է
4. Ուսանողներ	Բավարարում է
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ	Բավարարում է
6. Հետազոտություն և զարգացում	Չի բավարարում
7. Ենթակառուցվածք և ռեսուրսներ	Բավարարում է
8.Հասարակական պատասխանատվություն	Բավարարում է
9. Արտաքին կապեր և միջազգայնացում	Բավարարում է
10. Որակի ներքին ապահովման համակարգ	Չի բավարարում

Հերմինե Գրիգորյան
Փորձագիտական խմբի ղեկավար

28-ը նոյեմբերի 2023թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐ

1. **Հերմինե Գրիգորյան՝** 1992 թ. Ավարտել է Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետը: Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու է (2008), դոցենտ (2011): 1992 թվականից դասավանդում է Վանաձորի Պետական Համալսարանում /ՎՊՀ/: 2014-2020 թթ. եղել է ՎՊՀ Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան: 2020 թվականից ՎՊՀ-ի Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանն է: Վարում է «Մաթեմատիկական ֆիզիկայի հավասարումներ», «Դիֆերենցիալ հավասարումներ», «Կոմպլեքս անալիզ», «Մեկ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվ», «Շատ փոփոխականի ֆունկցիայի դիֆերենցիալ և ինտեգրալ հաշիվ», «Ֆինանսական մաթեմատիկա» դասընթացները: Զբաղվում է փոփոխական հաստության անիզոտրոպ սալերի եզրային խնդիրների հարցերով:
2. **Գոհար Սարգսյան՝** 1997թ. ավարտել է Երևանի պետական բժշկական համալսարանի բուժական ֆակուլտետը, իսկ 1998թ.՝ ինտերնատուրան: 1999թ.-ից մինչ օրս աշխատում է Երևանի հենակետային բժշկական քոլեջում, եղել է վերակենդանացման, աղետների բժշկության, քաղաքացիական պաշտպանության, անվտանգության և առաջին բուժօգնության ամբիոնի դասախոս, ապա՝ մեթոդիստ: 2021թ.-ից՝ կրթության որակի ապահովման պատասխանատուն է: Մասնակցել է մի շարք վերապատրաստումների:
3. **Հայարփի Զավրուշյան՝** 2008թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի «Կենսաքիմիա» բակալավրիատի կրթական ծրագիրը, 2010թ. ավարտել է նույն ֆակուլտետի նույն մագիստրոսական ծրագիրը, իսկ 2014թ. ասպիրանտական ծրագիրը՝ ստանալով կենսաբանական գիտությունների թեկնածուի աստիճան: Ներկայումս աշխատում է Ավանդական բժշկության համալսարանի բնագիտական առարկաների ամբիոնում որպես դասախոս և ամբիոնի վարիչ, միևնույն ժամանակ հանդիսանում է Երևանի պետական համալսարանի Կենսաբանություն գիտահետազոտական ինստիտուտի գիտաշխատող: Բազմաթիվ հոդվածների հեղինակ է, մասնակցել է մի շարք տեղական և միջազգային գիտաժողովների:
4. **Մանվել Գևորգյան՝** 2019թ. ավարտել է Գավառի արվեստի դպրոցը, իսկ 2021թ.՝ Գեղարքունիքի մարզի Պ. Ղանդիլյանի անվան N2 միջնակարգ դպրոցը: 2021թ.–ից մինչ օրս սովորում է Գեղարքունիքի մարզի ք. Գավառի պետական գյուղատնտեսական քոլեջի «Ֆիններ» կրթական ծրագրում: 2022թ. մասնակցել է ՌԱԱԿ–ի «Ուսանողության ձայն» նախագծի ուսանող–փորձագետների վերապատրաստմանը: Մասնակցել է կամավորական մի շարք աշխատանքների, Եղել է «Բայազետ» վերլուծական-հետազոտական հայկական կենտրոնի գլխավոր քարտուղարի օգնական:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

N.	10.09.2023թ	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Դասալսումներ	11:00	12:00	60 րոպե
2.	Ռեսուրսների դիտարկում	12:10	13:10	60 րոպե
3.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:20	14:20	60 րոպե
4.	Հանդիպում տնօրենի հետ	14:30	15:15	45 րոպե
5.	Հանդիպում տնօրենական խորհրդի հետ	15:25	16:10	45 րոպե
6.	Հանդիպում գործատուների հետ	16:20	17:10	50 րոպե
7.	Հանդիպում քոլեջի շրջանավարտների հետ	17:20	18:10	50 րոպե
8.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	18:20	18:30	10 րոպե

N.	11.09.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում ուսումնական և դաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալի հետ	09:30	10:40	70 րոպե
2.	Հանդիպում ամբիոնների վարիչների հետ	10:50	11:40	50 րոպե
3.	Հանդիպում ինքնավերլուծություն իրականացրած խմբի հետ	11:50	12:30	40 րոպե
4.	Հանդիպում ստորաբաժանումների (պրակտիկայի և կարիերայի պատասխանատու, կադրերի և ընդհանուր բաժին, գրադարանավար, հաշվապահ, լաբորանտ) ներկայացուցիչների հետ	12:40	13:25	45 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:35	14:35	60 րոպե
6.	Հանդիպում դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ	14:45	15:45	60 րոպե
7.	Հանդիպում ուսանողների հետ (10-12 հոգի)	15:55	16:45	50 րոպե
8.	Փաստաթղթերի ուսումնասիրություն, փորձագիտական խմբի փակհանդիպում	16:55	18:30	95 րոպե

N.	12.09.2023թ.			Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում «Քույրական գործ» կրթական ծրագրի պատասխանատուների հետ	Հանդիպում «Դեղագործություն» կրթական ծրագրի պատասխանատուների հետ	Հանդիպում «Բուժական կոսմետոլոգիա» կրթական ծրագրի պատասխանատուների հետ	09:30	10:20	50 րոպե
2.	Հանդիպում «Քույրական գործ» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Դեղագործություն» կրթական ծրագրի դասախոսների հետ	Հանդիպում «Բուժական կոսմետոլոգիա» կրթական ծրագրի դասախոսների հետ	10:30	11:20	50 րոպե
3.	Հանդիպում «Քույրական գործ» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Դեղագործություն» կրթական ծրագրի ուսանողների հետ	Հանդիպում «Բուժական կոսմետոլոգիա» կրթական ծրագրի ուսանողների հետ	11:30	12:20	50 րոպե
4.	Հանդիպում ՈՒԽ-ի հետ			12:30	13:10	40 րոպե
5.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ			13:20	14:20	60 րոպե
6.	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ			14:30	15:10	40 րոպե
7.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում			15:20	18:30	190 րոպե

	13.09.2023թ.	Մեկնարկ	Ավարտ	Տևողություն
1.	Հանդիպում որակի ապահովման պատասխանատուի հետ	09:30	10:30	60 րոպե
2.	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	10:40	11:20	40 րոպե
3.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	11:30	13:00	90 րոպե
4.	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:10	14:10	60 րոպե
5.	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	14:20	15:00	40 րոպե
6.	Հանդիպում ՄՈՒՀ-ի ղեկավար կազմի հետ	15:10	15:30	20 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

N	Փաստաթղթի անվանում	Չափանիշ
1.	ՌԾ-ի իրականացման պլան-ժամանակացույց	1
2.	ՈՆԱՊ-ի 2021-2022թթ. իրականացրած ուսումնասիրություն /ՌԾ, գնահատման ցուցիչ 1/	1
3.	Ստորաբաժանումների աշխատանքային պլաններ և հաշվետվություններ /վերջին 3 տարիների/	2
4.	Քոլեջի նախորդ կազմակերպական կառուցվածքը	2
5.	Տնօրինական խորհրդի նիստերի արձանագրություններ վերջին 2 տարիների	2
6.	Նախահաշիվ /2023թ./	2
7.	Հաստիքացուցակ՝ ըստ աշխատավարձերի /վերջին 2 տարիների/	2
8.	Մանկավարժական խորհրդի, ամբիոնների նիստերի արձանագրություններ	2
9.	Տնօրենի տարեկան հաշվետվություն/2022-2023թթ./	2
10.	Գործող ՄԿԾ-ների վերաբերյալ վերլուծական զեկույց	3
11.	Ատեստավորման հանձնաժողովի նախագահի եզրակացություններ/2023 թ./	3
12.	Քննական տեղեկագրեր	3
13.	Դասամատյաններ	3
14.	Բոլոր կրթական ծրագրերի ամբողջական փաթեթներ	3
15.	Պրակտիկաների ծրագրեր, ուսանողների պրակտիկայի օրագրեր (բոլորից 3-ական)	3
16.	Դասախոսների դասի պլաններ	3
17.	Ավարտական քննությունների հարցաշար	3
18.	Ուսանողներին ներկայացվող ընթացիկ առաջադրանքներ 3 ՄԿԾ-ների շրջանակում	3
19.	Ուսանողներին տրամադրվող խորհրդատվությունների ժամանակացույցներ	4
20.	ՈՒԽ աշխատանքային պլաններ և հաշվետվություններ /վերջին 2 տարիների/	4
21.	ՈՒԽ ընթացիկ հանդիպումների արձանագրություններ	4
22.	Վերջին 3 տարիների շրջանավարտների բազա վերցնել	4
23.	Դասալսումների մատյաններ/Ժամանակացույց	5
24.	Խրախուսում ստացած դասախոսական և վարչական անձնակազմի ցանկ՝ նշելով խրախուսման ժամանակահատվածը, ձևը /վերջին 3 տարիների/	5
25.	Վերջին 3 տարիներին մասնագիտական վերապատրաստումներ անցած դասախոսների ցանկ՝ նշելով նաև վերապատրաստման թեման, տևողությունը, իրականացնող կազմակերպությունը	5

26.	Դասախոսական կազմի ռեզերվ	5
27.	Հետազոտական աշխատանքների օրինակներ, Կուրսային աշխատանքներ	6
28.	Գրականության ցանկ՝ տարանջատված մասնագիտական և ոչ մասնագիտական գրականության	7
29.	Համագործակցության բոլոր գործող պայմանագրերը մյուս քոլեջների, գործատու-կազմակերպությունների, բուհերի հետ կամ այլ կազմակերպությունների հետ	9
30.	Վերջին 3 տարիների Որակի ապահովման կենտրոնի իրականացրած բոլոր հարցումների հարցաթերթիկները և վերլուծությունները	10
31.	Որակի ապահովման պատասխանատուի պլաններ և հաշվետվություններ /վերջին 3 տարիների/	10

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

1. Լսարաններ,
2. Վարդենիսի ԲԿ-ի կողմից տրամադրված լսարան,
3. Սրճարան,
4. վարչական սենյակներ,
5. Մասնագիտական կաբինետներ,
6. Գրադարան

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հավելված 1

ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ ՍՊԸ

Կազմակերպական կառուցվածքի սխեմատիկ պատկերը ըստ ենթակայության և հաղորդակցության կապերի

Հաստատվել է Տնօրինական խորհրդի՝
«16»01.2022թ. N 3 նիստում
Վավերացնում եմ քոլեջի
հիմնադիր և տնօրեն՝ Ն. Գասպարյան
«17»01 2022թ.



ԵԺԱՆԻՇՎՈՒՄԻ ՀՈՂԵՑԱԼ ՍՊՈՍՏՈՄ

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1.	ԲԿ	Բժշկական կենտրոն
2.	ԿԳՄՍ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
3.	ՄԿԾ	Մասնագիտական կրթական ծրագիր
4.	ՄԿՈՒ	Մասնագիտական կրթություն և ուսուցում
5.	ՄՌԿ	Մարդկային ռեսուրսների կառավարում
6.	ՄՈՒՀ	Մասնագիտական ուսումնական հաստատություն
7.	ՄԿՈՒԶԱԿ	Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն
8.	ՊԿՉ	Պետական կրթական չափորոշիչ
9.	ՊԻԳԲ	Պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում
10.	ՌԾ	Ռազմավարական ծրագիր
11.	ՎԲՀՔ	Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ
12.	ՎՊՀ	Վանաձորի պետական համալսարան
13.	ՈԱԱԿ	Որակի ապահովման ազգային կենտրոն
14.	ՈԱ	Որակի ապահովում
15.	ՈԻԽ	Ուսանողական խորհուրդ
16.	ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն